AZG NEW PDF.qxd 04/05/2010 22:55 Page 1

Ազգ
Azg
5 ՄԱՅԻՍ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 81 (4461)
ISSN: 1829-1651

## Գազատարի վերականգնման աշխատանքները դեռ շարունակվում են

«**Ազգը**» տեղեկացրել էր, որ ապրիլի 29-ից Վրաստանի բարձրլեռնային Կոբի-Գուսաուրի շրջանում սողանքների հետեւանքով ժամանակավորապես դադարեցվել է Ռուսաստանից դեպի Հայաստան գազի մատակարարումը: Մենք նաեւ տեղեկացրել էինք, որ, ըստ «Ջորջիա-օնլայն» կայքի, գազամատակարարումը կվերականգնվի մինչեւ մայիսի մեկը: Սակայն մայիսի 4-ի դրությամբ գազատարը դեռեւս վերականգնված չէր: Այս ամբողջ ընթացքում Հայաստանում գազ մատակարարվում էր ի հաշիվ մեր երկրի պահուստների: «Հայռուսգազարդից» երեկ տեղեկացրին, որ գազատարի վերականգնման աշխատանքները շարունակվում են, իսկ ավարտի հստակ ժամկետներ չկան: Ընկերությունից նաեւ տեղեկացրել են, որ Հայաստանի ներքին պաշարները բավարար են՝ առանց սահմանափակումների ապահովելու գազամատակարարումը երկրում:

**ՕՐԵՐԻ ՀԵՏ**

## Ուսանողությունը մի քիչ հեղափոխական պիտի լինի

Մինչեւ երեկ դառնացած էի: Դառնացած՝ մեր ուսանողությունից, նրա անտարբերությունից: Հաճախ, նույնիսկ անմիջականորեն իրեն վերաբերող խնդիրներին մեր ուսանողությունը սովորաբար մոտենում է անտարբերությամբ: Դառնությանս պատճառն այս անգամ այն քար-լռությունն էր, որը հետեւեց մեր թերթի ապրիլի 2-ի համարի հրապարակմանը Գյուղատնտեսական համալսարանի այգում (նախկին՝ Ղուկաս Ղուկասյանի անվան, այժմ՝ Ուսանողական այգի) կատարվող վանդալիզմի մասին: Միակ արձագանքողը եղել էր Երեւանի գլխավոր ճարտարապետը, որի «պարզաբանումները» հրատարակել էինք թերթի հաջորդ համարում, մեր կողմից ավելացնելով, որ կնախընտրեինք ոչ մի բացատրություն էլ ստացած չլինել, քան նման՝ ոչինչ չասող պատասխան-նամակ ստանալ:

Մեր ընթերցողները հիշում են, որ վերոհիշյալ հրապարակումը, ուղեկցող լուսանկարներով, ներկայացնում էր հիշյալ՝ գեղեցիկ ու թանկարժեք ծառատեսակներով հարուստ այգում, նախկին փայտաշեն եւ բացօթյա զույգ սրճարանների փոխարեն, այժմ թիթեղյա ամրափակ եւ հսկայական տարածք զբաղեցնող ցանկապատեր: Ներսում այժմ էլ կատարվում է իսկական եղեռնագործություն՝ 10-15 մետր խորությամբ հիմքեր են փորված եւ ամրակուռ բետոնապատում է կատարվում, հետագայում հսկայական շինություն բարձրացնելու ակնհայտ մտադրությամբ: Մեր հրապարակմանը հաջորդած օրերին այնտեղ միայն մի փոփոխություն էր կատարվել: Աբովյան փողոցի կողմից ծածկված կառուցապատումը կիսվել էր՝ բաց թողնված միջանցքից Վիկտոր Համբարձումյանի արձանը եւ վերջինիս հետեւում գտնվող փոքրիկ աստղադիտարանը կրկին ի ցույց հանելու ստիպմամբ: Այսքանը:

Դառնացել էի, ավելի շուտ՝ անզորության զգացողությունից գրեթե հուսահատվել էի: Այդ այգին եզակի հանգստյան գոտի է շրջապատում գտնվող 4 համալսարանների առնվազն 10 հազար ուսանողների համար, որոնք ծպտուն անգամ չէին հանել իրենց աչքի առաջ կատարվող խժդժության դիմաց: Եթե ոչ իրենց քաղաքը, որ 10 տարուց ավել ամեն օր է զրկվում կանաչ տարածքից, գոնե իրենց այգին պաշտպանեին...

Եվ ահա, երեկ, մեր պաշտոնակից «Առավոտ» թերթում հանդիպեցի մի փոքրիկ տեղեկատվության. ուսանողները հանդես են եկել «Մենք ենք այս քաղաքի տերը» սոցիալական նախաձեռնությամբ, եւ 2 300 անդամներով հրապարակել հայտարարություն, որը «պահանջում է դադարեցնել շինարարությունը եւ այգին վերադարձնել հասարակությանը»: Ահա սրա՛ սպասումը ունեի ես՝ արձագանք ոչ թե մեր հրապարակածին, այլ իրենց իսկ իրավունքների դեմ կատարվող ոտնձգությանը: Եվ ես վստահ եմ հիմա, որ հետեւողական լինելու պարագայում այդ 2 300 ուսանողները կարող են հասնել իրենց եւ մեր նպատակին, փրկելով ոչ միայն այդ, այլեւ մյուս բոլոր այգիներն ու կանաչ տարածքները, որոնք զոռբաների ու չինովնիկների անհագուրդ ախորժակի զոհերն են դառնում ամեն օր ու ժամ:

Քաղաքացիական հասարակություն մենք չունենք: Գոնե ուսանողությունը ստանձնի հասարակական իր դերը, թեկուզ մի քիչ հեղափոխական, թեկուզ հախուռն, բայց միշտ անկեղծ եւ անկաշառ: Դա իր իրավունքն է, նաեւ՝ պարտականությունը:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Հովիկ Աբրահամյանը խոսեց ԼՂ եւ հայ-թուրքական կարգավորման գործընթացներից

## *Ֆրանկոֆոնիայի համաժողով Ազգային ժողովում*

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Հայաստանի Ազգային ժողովում երեկ գումարված Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի տարածաշրջանային համաժողովին ներկա էին Եվրոպայի տարբեր երկրներից եկած 80 մասնակիցներ: Սա քառօրյա համաժողով է՝ բավական լուրջ կազմված ծրագրով, բավական լուրջ բանախոսներով, եւ ինչպես մասնակիցներն էին նշում, արդեն իսկ փաստը, որ ՖԽՎ-ի համաժողովն անցկացվում է Երեւանում (ԱԺ նախագահի հրավերով), դրական իրողություն է Հայաստանի համար: Մեր երկիրն այդ կազմակերպությունում ասոցացված անդամի կարգավիճակ է ստացել 2008 թվականին, ընդունելով ֆրանկոֆոնիայի ընդհանուր արժեքները եւ ստանձնելով դրանց տարածմանը նպաստելու պատրաստակամություն: Այս համաժողովն ամբողջովին նվիրված էր կրթական խնդիրներին եւ մասնավորապես՝ դպրոցական կրթությանը:

Ի դեպ, ելույթ ունենալով համաժողովում, Հայաստանի ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանը** նշեց, որ դարեր ի վեր ֆրանսերենը մեր ժողովրդի համար եղել է ավելին, քան իբրեւ հաղորդակցության լեզու:

*Տես էջ 2*

## Կաթողիկոսը մեկնեց Ֆրանսիա եւ Մեծ Բրիտանիա

**Երեկ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը մեկշաբաթյա աշխատանքային այցով մեկնեց Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի հայոց թեմեր:**

**Այցի ընթացքում Փարիզում եւ Լոնդոնում Նորին Սրբությունը հանդիպումներ կունենա թեմակալ առաջնորդների, թեմական կառույցների ներկայացուցիչների եւ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարների հետ:**

## Հարավային Կովկաս-ԵՄ համագործակցությունը կախված է մամուլի ազատությունից

**Գերմանիայի մարդու իրավունքների նորանշանակ հանձնակատար Մարկուս Լյոնինգը** (Ազատ դեմոկրատական կուսակցություն) մայիսի 4-ին «Դեր թագեսշպիգել»-ին տված հարցազրույցում մանրամասնում է իր ուշադրության առանցքում գտնվող խնդիրները՝ պայքար մահապատժի դեմ եւ մամուլի ազատության համար:

**«Բոլոր ազատությունների մայրը մամուլի եւ կարծիքի ազատությունն է: Որտեղ անհատն իրավունք ունի ազատ արտահայտվելու, որտեղ լրագրողներն ազատ են իրենց հրապարակումներում, այնտեղ բռնակալները երկար չեն մնում», ասել է հանձնակատարը եւ օրինակ բերել. «Հարավային Կովկասի հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, մամուլի ազատության խնդիրն ունեն, բայց ուզում են ԵՄ-ի հետ սերտորեն համագործակցել: Մենք պիտի այդ համագործակցությունը պայմանավորենք նրանով, որ նրանք երաշխավորեն մամուլի ազատությունը», ասել է ԳԴՀ մարդու իրավունքների հանձնակատարը:**

Ան. Հ.
Գերմանիա

## Հայաստանը ժամանակ է պահանջել, որ հանձնի՞ Քարվաճառն ու Լաչինը

Հայաստանը իբր ժամանակ է խնդրել Բաքվից՝ որոշ տարածքներ վերադարձնելու համար: Ադրբեջանի հեռուստաընկերություններից մեկի եթերում այսպիսի հայտարարություն, իսկ ավելի ճիշտ բնութագրելու դեպքում՝ անհեթեթություն է ասել երկրի փոխարտգործնախարար **Արազ Ազիմովը**, որին որպես կանոն խոսեցնում են բոլոր այն «անդուր» հայտարարությունները անելու անհրաժեշտության դեպքում, երբ այդպիսիք չի ցանկանում բարձրաձայնել Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը:

Ազիմովի հայտարարություններում ողջամտությունն առավել պակաս է դրսեւորվել նաեւ հայ-թուրքական իրողությունների համատեքստին անդրադառնալիս: Մասնավորապես, ըստ ադրբեջանական կայքէջերի մեջբերումների, Ազիմովն ասել է, թե Հայաստանի եւ Թուրքիայի սահմանը առաջին փուլում կարող էր բացվել «հինգ շրջանները եւ Լաչինի ճանապարհն ազատելով», ինչն էլ իբր ցույց կտար Բաքվի «բարի մտադրությունները Երեւանի առնչությամբ»:

«Հինգ շրջանները պետք է ազատվեն, ու բացվի Լաչինի ճանապարհը: Լաչինը եւ Քելբաջարը ազատելու համար Հայաստանը ժամանակ է պահանջում: Այդ ժամկետները պետք է որոշվեն, ու այդ առնչությամբ համանախագահների առաջարկություն գոյություն ունի», բնույթով հետաքրքրական, բայց առավել շատ մտահոգիչ տոնայնություններով հայտարարության հեղինակը թերեւս Ազիմովը չէ, սակայն բարձրաձայնել է հենց նա:

Այսքանն, ըստ էության, նոր տեսակի հայտարարություն էր, իսկ մնացյալը, ինչին անդրադարձել է Արազ Ազիմովը, ադրբեջանական անլրջությունների այնպիսի շարքից է, ինչպիսին է, ասենք, Լեռնային Ղարաբաղին «ժամանակավոր կարգավիճակ տալու» հույսը, իսկ ավելի շուտ՝ մտայնությունը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Ահմադինեժադ-Քլինթոն «մենամարտ» ՄԱԿ-ի կենտրոնակայանում

**Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնակայանում, Միջուկային զենքի չտարածման պայմանագրի կատարմանը նվիրված կոնֆերանսի ամենահետաքրքրական պահը, ինչպես եւ սպասվում էր, Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի եւ ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հեռակա «մենամարտն» էր:**

**Նրանցից յուրաքանչյուրն իր ելույթում ներկայանում էր որպես միջուկազերծ աշխարհի ջատագով՝ հակառակ կողմին մեղադրելով Միջուկային զենքի չտարածման պայմանագրի խախտման մեջ, նշում է ՌԻԱ գործակալությունը:**

**Ահմադինեժադը մասնավորապես հայտարարել է, որ ինքը հավանություն է տալիս իրանական թույլ հարստացված ուրանը ռուսական եւ ֆրանսիական միջուկային վառելիքի հետ փոխանակելու գաղափարին: Միեւնույն ժամանակ նա ԱՄՆ-ին խստիվ քննադատել է համաշխարհային միջուկային անվտանգության համակարգի երկակի չափանիշների համար: Ըստ նախագահի, այստեղ անհրաժեշտ են արմատական փոփոխություններ:**

**Միացյալ Նահանգներն աշխարհում միջուկային զենք կիրառած միակ պետությունն է, ընդգծել է Ահմադինեժադը՝ հիշեցնելով Հիրոսիման եւ Նագասակին:**

**«Միացյալ Նահանգների կառավարությունը ոչ միայն միջուկային զենք կիրառեց Ճապոնիայի դեմ, այլեւ շարունակում է դրանով սպառնալ մյուս երկրներին, ներառյալ Իրանին», «ԱՄՆ-ը վերջին տասնամյակներում քանիցս պատերազմներ է սկսել իր նախկին դաշնակիցների դեմ», «ԱՄՆ-ի հետախուզական ծառայությունները եւ սիոնիստական վարչակարգը (Իսրայելը) աջակցում են ահաբեկչական խմբեր ցանցերին»՝ Ահմադինեժադի այս եւ համանման մյուս հայտարարությունները զայրացրել են ԱՄՆ-պատվիրակության անդամներին:**

**Իրանի նախագահի ելույթի ավարտին չսպասելով՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի պատվիրակությունները լքել են կոնֆերանսի դահլիճը:**

**Պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հենց սկզբից ներկա չէր Ահմադինեժադի ելույթին: Ավելի ուշ ելույթ ունենալով՝ Քլինթոնը Իրանի նախագահի հայտարարությունները բնութագրեց որպես «վայրենի մեղադրանքներ», իսկ Իրանը՝ «կոնֆերանսի միակ երկիր, որը չի կատարում Միջուկային զենքի չտարածման պայմանագիրը»:**

**Հատկանշական է, որ իրանական պատվիրակությունը (թեեւ առանց Ահմադինեժադի) մինչեւ վերջ ուշադիր լսել է Հ. Քլինթոնի ելույթը եւ չի լքել դահլիճը:**

## ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանի պատասխանը «Ազգ» օրաթերթի հարցին

- Պարոն Քոչարյան, Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը մի շարք պնդումներ է արել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վերաբերյալ: Արդյոք հիմնավորվա՞ծ են այդ պնդումները:

- Երբ Ադրբեջանը պատրաստ կլինի վերադարձնել իր կողմից օկուպացված Լեռնային Ղարաբաղի շրջանները եւ ճանաչել ԼՂՀ անկախությունը, երբ կձերբազատվի միջնադարյան մտածելակերպից եւ գործելաոճից, այդ ժամանակ Բաքուն կարող է խնդրել ԼՂՀ-ին քննարկումներ ծավալել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջը:

AZG NEW PDF.qxd 04/05/2010 22:23 Page 1



# Նոր փիլիսոփայության անհրաժեշտություն

## «Ժողովրդահայրենասիրական ուժերի» առաջին հավաքը

Երեկ Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ «Ժողովրդահայրենասիրական ուժերի» առաջին հավաքը: Շարժումը նախաձեռնել է ԱԺ պատգամավոր **Վարդան Խաչատրյանը**, եւ ինչպես հենց ինքը նշեց, «Շարժումը ներառում է պարզապես անհաս քաղաքացիների` առանց կուսակցական, քաղաքական պատկանելության, եւ գլխավոր նպատակն է հասարակության համախմբման միջոցով երկիրը վերադարձնել իր զարգացման ակոսին»: «ԽՍՀՄ փլուզումից հետո մեր կարեւորագույն ձեռքբերումներն են Հայաստանի անկախությունն ու ազատ Արցախը: Այսօր, սակայն, հայ-թուրքական գործընթացով Հայաստանը ներքաշվել է մի հորձանուտ, որը հղի է ծանրագույն հետեւանքներով, մենք պետք է զգուշացնենք հասարակությանն ու իշխանություններին այս վտանգների մասին», ասաց Խաչատրյանը` ներկայացնելով շարժման ընդունած հայտարարությունը:

Ելույթ ունեցածներից ոչ ոքի պաշտոնն ու կոչումը չնշվեցին, նրանց համախմբել էին, իրենց ասելով, երկրի առջեւ ծառացած բազմաթիվ` արտաքին ու ներքին խնդիրները:

**Մանվել Եղիազարյանի** («Արաբո» ջոկատի հրամանատար) խոսքերով` «Ղարաբաղում տանուլ ենք տալիս, Ցեղասպանության մասին ամաչում ենք խոսել, եւ ոչ մի նորմալ բան չի կատարվում ո՛չ արտաքին, ո՛չ էլ ներքին ոլորտներում». «Արցախի հարցում ոչ ոք չի կարող խոսել միակողմանի զիջումներից: Բացի այդ, ես չեմ ընդունում հավանական պատերազմի պրոպագանդան մեզանում, ավելին` այդ կարծեցյալ պատերազմի հետեւանքով հասարակության շրջանում առաջացած վախի մթնոլորտը: Այս ամենի միակ ելքը հայրենասիրական ուժերի համախմբումն է», ասաց Եղիազարյանը:

**Աշոտ Մանուչարյանի** խոսքերով` «Անհրաժեշտ է փոխել փիլիսոփայությունը»: «Հայաստանում նվաստացման փաստերը բազմաթիվ են, մարդը հասցվել է կենդանական վիճակի: Ստրկությունը, ուտելը դարձել է կյանքի իմաստը, չկան կրթություն, գիտություն, արդյունաբերություն: Որդին ստանում է հորը, հայրը` որդուն, հաջողակին անվանում են իշխանավոր, իսկ անհաջողակին` բոմժ: Կա՞ն այսօր մարդիկ, որոնք նոր փիլիսոփայություն կմտցնեն այս երկիր` սկսելով հենց իրենցից, քանի որ այս փիլիսոփայության շարունակումը կնշանակի Հայաստանի վերջը», ասաց Մանուչարյանը:

Քաղաքագետ **Իշխան Թովմասյանը**, խոսելով արտաքին քաղաքականությունից, նշեց, որ Հայաստանը չի կարող Թուրքիայի հետ հարաբերություններ սկսել, քանի դեռ Թուրքիան չի կատարել իր պարտավորությունները. «Մենք ենք պահանջատեր, ոչ թե Թուրքիան, միայն այս խնդիրների լուծումից հետո հնարավոր է առաջ շարժվել»: Արցախի վերաբերյալ բանախոսն ընդգծեց, որ որեւէ փոխզիջում չի կարող բխել Հայաստանի շահերից. «Մենք գիտենք այն գինը, որ վճարել ենք հանուն ազատ Արցախի», շեշտեց Թովմասյանը:

Ներքին կյանքին անդրադառնալով` բանախոսը խոսեց «երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող գործարանների վաճառքի փաստերից, գազի, ջրի, սննդամթերքի պարբերաբար թանկացումներից», իսկ իր խոսքի վերջում ընդգծեց. «Մենք մտահոգված ենք հայրենիքի կայունությամբ, հզորությամբ, ժողովրդի միասնությամբ եւ մեր երեխաների ապագայով: Հիշեցնեմ, որ երբ ժողովուրդը կանգնի` զերանը չի դիմանա», եզրափակեց Թովմասյանը:

Հ. ԱՓՅԱՆ

*Հ. Գ. - Շարժման նախաձեռնող Վարդան Խաչատրյանը նաեւ տեղեկացրեց, որ մայիսի 8-ին Երեւանում` ԼՂՀ ներկայացուցչության շենքի դիմաց իրենք կկազմակերպեն «Համերաշխության ցույց»:*

# Հովիկ Աբրահամյանը խոսեց ԼՂ եւ հայ-թուրքական կարգավորման գործընթացներից

*1-ին էջից*

«1915-23 թվականներին Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության հետեւանքով Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Բելգիայում, Կանադայում, Մերձավոր Արեւելքի երկրներում ապաստանած հայ ժողովրդի զավակների համար ֆրանսերենը դարձավ ստեղծագործելու եւ արարելու լեզու` Շառլ Ազնավուրի, Վահե Քաչայի, Անրի Վեռնոյի, Գառզուի, Ժանսեմի, Ալիս Սափրիչի եւ այլ հայազգի գործիչների համար», դահլիճում նստած ֆրանսախոս պատվիրակներին ասաց-տեղեկացրեց ԱԺ նախագահը` նշելով դարեր մայրենիի պահպանման համար պայքարող հայ ժողովրդի պարագան, նաեւ` այլոց լեզուն եւ մշակույթն իմանալու անհրաժեշտությունը եվրոինտեգրման քաղաքականություն որդեգրելու ճանապարհին: Հավանաբար նկատի ունենալով համեմատաբար լայն ներկայացված լսարանը` եվրոպական երկրների առումով, նա նաեւ խոսեց հայ-թուրքական եւ ղարաբաղյան կարգավորման գործընթացներից: «Մինչ Հայաստանը բազմիցս հայտնել է ստանձնած պարտավորությունները կատարելու իր պատրաստակամությունը, Թուրքիան ի սկզբանե խուսանավում էր` զանազան պատրվակներ եւ պատճառներ բերելով, խոսքից հետ կանգնելով, արձանագրությունները կապելով ԼՂ հակամարտության հետ` ձգձգելով դրանց վավերացումը, դրանով իսկ արգելակելով հարաբերությունների կարգավորման գործընթացը: Նման նախապայմանների առաջադրումն անընդունելի է Հայաստանի համար: Եվ մեր երկրի նախագահը հրամանագիր է ստորագրել արձանագրությունների վավերացման ընթացակարգը կասեցնելու համար: Հայաստանն առայժմ դուրս չի գալիս գործընթացից, մենք սպասում ենք, որ Թուրքիան կառուցողական մոտեցում ցուցաբերելու կամք դրսեւորի», ասաց Հ. Աբրահամյանը` նշելով, որ Հայոց ցեղասպանության հարցը չի կարող դրվել եւ չի դրվի որեւէ քաղաքական աճուրդի կամ սակարկության: ԼՂ խնդիրն էլ, ըստ ԱԺ նախագահի, կապ չունի



ARMENPRESS

հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հետ ոչ միայն այն պատճառով, որ արձանագրություններում այդ մասին խոսք չկա, եւ դրանք առանձին գործընթացներ են, այլեւ` որովհետեւ Ցյուրիխում արձանագրությունները ստորագրել են Հայաստանն ու Թուրքիան, ոչ թե ԼՂՀ-ն եւ Ադրբեջանը:

ԱԺ նախագահի ելույթից հետո ներկայացվեց ՖԽՀ գլխավոր քարտուղար Ժաք լը Ժանդրի ուղերձը, իսկ ՖՀԽ տարածաշրջանային առաքելության ղեկավար Ժան Պոլ Վահլը Հայաստանի եւ Ֆրանկոֆոնիայի կապերի համատեքստում կարեւորեց հայկական սփյուռքի դերակատարությունը Ֆրանսիայի քաղաքական, մշակութային եւ այլ ոլորտներում, նշելով, որ հայազգի հանահայտ մարդիկ հարստացնում են Ֆրանսիայի մշակույթը: ՖՀԽ-ում Հայաստանի պատվիրակության ղեկավար Արմեն Ռուստամյանն իր խոսքում նկատեց, որ հայկական պատվիրակությունը ՖԽՀ-ում կունենա իր ուրույն դերը, նրա խոսքից պարզ դարձավ, որ ԱԺ պաշտոնական կայքէջը նաեւ ֆրանսերեն տարբերակ կունենա: Հայաստանի ԱԳ նախարարի խորհրդական Քրիստիան Տեր-Ստեփանյանը նշեց Հայաստանի իշխանությունների կամքի մասին` ֆրանսերենը համալսարանական մակարդակով զարգացնելու առումով: Հետագա ելույթներն անդրադարձներ էին կրթական համակարգերի մարտահրավերներին` Հայաստանի, տարածաշրջանի եւ Եվրոպայի մակարդակով: ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը խոսեց Հայաստանի կրթության համակարգի` «փոփոխվելով` պահպանել» կարգախոսի եւ գլոբալ աշխարհում առողջ ավանդույթի տարրերն ու ազգային դիմանկարը պահպանելու մասին, իսկ մի շարք եվրոպական երկրների խորհրդարանականներ ներկայացրին իրենց կրթական համակարգերի առանձնահատկությունները:

ԱԺ դահլիճը դեռեւս երկու օր տաք քննարկումների վայր կլինի ՖԽՀ տարածաշրջանային 23-րդ համաժողովի մասնակիցների համար:



# ԱՄՆ դեսպան. «Դրական է, որ այս տարի առաջին անգամ Թուրքիայում նշվեց ապրիլի 24-ը` հայերի հիշատակի օրը»



Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպանի համոզմամբ, հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացի կասեցման ուղերձով նախագահ Սերժ Սարգսյանը պարզ դարձրեց, որ Հայաստանը չի դադարեցնում Թուրքիայի հետ մերձեցման գործընթացը, այլ սպասում է այն ժամանակին, երբ Թուրքիան ավելի պատրաստ կլինի դրան:

«Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպան **Մարի Յովանովիչը** ողջունել է նախագահ Սարգսյանի` գործընթացը կենդանի պահելու որոշումը` մանրամասնելով. «Մենք կարծում ենք, որ այդպիսով կողմերը հնարավորություն են ստանում աշխատելու խաղաղության, կայունության եւ հաշտեցման տեսլականի ուղղությամբ: Միացյալ Նահանգները շարունակում է աջակցել երկու երկրների հարաբերությունների բարելավմանը, ինչպես նաեւ շարունակում է կողմերին հորդորել` անել հնարավորը կարգավորման պատուհանը բաց պահելու համար»:

Արձանագրությունների վավերացման կասեցումը հայկական կողմը բացատրում է այն հանգամանքով, որ Թուրքիան խախտել է բոլոր խելամիտ ժամկետներն ու շարունակում է Հայաստանի հետ խոսել նախապայմանների լեզվով: Հարցին, թե Վաշինգտոնն ընդունում է արդյոք գործընթացի կասեցման մեղքը իսկապես թուրքական կողմինը լինելու գնահատականը, Մարի Յովանովիչը պատասխանել է. «Համոզված չեմ, թե տվյալ դեպքում մեղավոր փնտրելը կառուցողական կլիներ: Կարող եմ արձանագրել միայն, որ Միացյալ Նահանգների դիրքորոշումն այս հարցում միշտ հստակ է եղել: Վերահաստատեմ այն` հայ-թուրքական մերձեցման գործընթացը պետք է առաջ գնա խելամիտ ժամկետներում եւ առանց նախապայմանների»:

ԱՄՆ դեսպանը հատուկ ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ վերջին երեք տարիներին ու հատկապես վերջին մեկ տարում «ականատես եղանք» Հայաստանի եւ Թուրքիայի հասարակությունների, ժողովուրդների փոխադարձ ձգտմանն ու հետաքրքրությանը` ուղղված միմյանց ավելի լավ ճանաչելուն, միմյանց հետ կապեր հաստատելուն:

«Ես ինքս այս ընթացքում թուրքերի շատ խմբեր տեսա այստեղ` Հայաստանում. ուսանողներ, տուրիստական գործակալներ, որ հետաքրքրված են այստեղ գործարարությամբ զբաղվելու հարցում: Կարծում եմ, այս ամենը շատ դրական է: Դրական է նաեւ այն, որ այս տարի առաջին անգամ Թուրքիայում նշվեց ապրիլի 24-ը` հայերի հիշատակի օրը», ասել է Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպանը:

Ա. Հ.

# Հայոց ցեղասպանության մասին գիտաժողով Սան Դիեգոյի համալսարանում

**Կալիֆոռնիայի Սան Դիեգո համալսարանում (UGSD) տեղի է ունեցել «Ռասիզմից դեպի ցեղասպանություն. կյանք առանց ատելության» խորագրով գիտաժողովը, որտեղ քննարկվել են ցեղասպանությունների կանխարգելման կարեւորության եւ դրանց ժխտման վտանգի վերաբերյալ հարցերը:**

**Քննարկման ընթացքում ուսումնասիրվել են 20-րդ դարում ռասիզմի օրինակները, որոնք հանգեցրել են զանգվածային սպանությունների եւ ցեղասպանությունների:**

**Սեմինար-քննարկման նպատակն էր բարձրացնել ուսանողների իրազեկվածության մակարդակը ռասիզմի եւ ցեղասպանության վերաբերյալ հարցերում:**

**Գիտաժողովի ընթացքում մասնագետներն առանձին թեմայով անդրադարձել են Հայոց ցեղասպանության խնդրին:**

**Ամերիկայի հայկական համագումարի (ԱՀՀ) արեւմտաամերիկյան մասնաճյուղի ղեկավար Եղիշե Պետրոսյանն անդրադարձել է Հայոց ցեղասպանության խնդրին` Օսմանյան կայսրության օրենքների խստականության եւ օրենսդրական լույսի ներքո` հավելելով, որ անհանդուրժողականությունից ծնունդ առավ սարսափելի վայրագություն:**

**«Հայոց ցեղասպանությունն առաջնահերթ նշանակություն ունի ցեղասպանության, անհանդուրժողականության եւ ատելության հարցի քննարկման համար: Դա ողբերգական պատմություն է, որովհետեւ ժամանակակից Թուրքիան, որն Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության համար պատասխանատու պետություն-ժառանգորդն է, ժխտում է այդ փաստը», գիտաժողովում ասել է Սան Դիեգո համալսարանի ծրագրերի համակարգող Մարինա Թրիները:** Հ. Հ.

# Կրկին Նուբարաշենի մասին

**Բնապահպանության նախարարը տեղյակ է եւ անձամբ է զբաղվում Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի հարցով, երեկ լրագրողների հետ հանդիպմանն ասաց Հայաստանի բնապահպանության նախարարության հատուկ պահպանվող տարածքների բաժնի պետ Արամ Աղասյանը:**

**Նա խնդրին առնչվող մանրամասն տեղեկություններ, սակայն, չտվեց` նշելով, որ դրանով զբաղվում է նախարարության թափոնների վարչությունը:**

Հ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 04/05/2010 21:44 Page 1



# «Խոսքն էր ի սկզբանե»

## Մամուլի ազատությունը Հայաստանում

Մայիսի 3-ին ողջ աշխարհն ավանդաբար նշում է մամուլի ազատության օրը, եւ այդ օրվա նախօրեին հեղինակավոր Freedom House-ի հրապարակած զեկույցում՝ Հայաստանը հերթական անգամ դասվում է ոչ ազատ երկրների շարքում: Սակայն թերեւս այստեղ կարեւորը ոչ այնքան Freedom House-ի կարծիքն է, որքան՝ մեր, իսկ մենք ինչպե՞ս ենք գնահատում խոսքի ազատության մակարդակը մեր երկրում եւ ի՞նչ ենք անում այդ ուղղությամբ: Ի դեպ, վերջին շրջանում ավելացել է նաեւ մեկ այլ հարցադրում, իսկ ո՞ւմ է պետք այդ խոսքի ազատություն կոչվածը, որը շատ դեպքերում վերածվում է ամենաթողության:

Ցավով պետք է նշեմ, որ մամուլի ազատությունը, անկախ Հայաստանի ծննդյան օրվանից նորելուկ իշխանությունների՝ ՀՀՇ-ի կողմից հայտարարվեց persona non grata, իսկ հետագայում բոլոր իշխանություններն էլ սկսեցին պահպանել այս սկզբունքը, եւ անկախ ու ազատ մամուլի փոխարեն, բոլշեւիկյան դպրոցը սերտած աշակերտների նման սկսեցին ստեղծել իրենց քարոզչությամբ եւ գովաբանությամբ զբաղվող ԶԼՄ-ներ: Հայկական լրատվամիջոցները շատ արագ «սեփականաշնորհվեցին» սկզբում կուսակցությունների, իսկ հետո՝ օլիգարխների կողմից: Փաստորեն, 4-րդ իշխանության փոխարեն Հայաստանում ստեղծվեց այս կամ այն քաղաքական ուժին կամ օլիգարխին սպասարկող լրատվամիջոցների եւ լրագրողների հսկայական բանակ: Վերջիններս իրենց գործունեությամբ ազատ խոսքի իմիտացիա են անում եւ դրա տակ հասկանում միմիայն իրենց կարծիքը ներկայացնելու ու տարածելու ձգտում: Հայաստանում հիմնականում իշխանությանը եւ ընդդիմությանը ծառայող լրատվամիջոցներն իրենց գործունեությամբ միայն մեկ խմբի քաղաքական շահերին ծառայելու գործառույթ են իրականացնում եւ իմիտացիա ստեղծում, թե Հայաստանում կարծես թե խոսքի ազատություն կա: Իրականում թե՛ առաջինը եւ թե՛ երկրորդը ատելով ատում են այլակարծությունը եւ ամեն մի խոսք, որը չի համընկնում իրենց քաղաքական շահերին: Նման գործառույթն իրականում վարկաբեկում է խոսքի ազատությունը, քանի որ իրենց ընդդիմադիրներ կոչողները արմատական երեւալու համար անցնում են թույլատրելի սահմանը, եւ հաճախ կարելի է այդ տիպի մամուլի էջերում կարդալ ամեն տեսակի հայհոյանքներ իշխանությունների հասցեին, իսկ վերջիններս էլ՝ իշխանությունները, նման հայհոյանքներն օգտագործում են տարբեր միջազգային կառույցների «ապացուցելու» համար, որ Հայաստանում իբր թե ազատ խոսք կա:

Ցավով նշեմ, որ Հայաստանի անկախությունից 19 տարի անց էլ մեր երկրում, մի քանի թերթերից ու ինտերնետ կայքերից բացի, որոնք ընդհանուր ԶԼՄ-ների 1 տոկոսն էլ անգամ չի կազմում, մնացած ողջ լրատվամիջոցները վերահսկելի եւ կառավարելի են տարբեր քաղաքական ուժերի եւ անհատների կողմից: Հայաստանում արվեց ամեն ինչ, որ չձեւավորվեն անկախ լրատվամիջոցներ, իսկապես անկախ լրագրողներն էլ ազատ գործելու ու գրելու հնարավորություն չունենան: Աստվածաշնչյան հայտնի «Խոսքն էր ի սկզբանե» արտահայտությունը պատահական չէ, իսկապես ամեն ինչ սկսվում է խոսքից, ազատ ու առանց վախի արտասանված խոսքից, քանի որ միայն դրանից հետո է սկսվում իրավունքների պաշտպանությունը, եւ միայն դրանից հետո է սկսվում իրական ժողովրդավարությունը: Հետեւաբար այսօր Հայաստանին ամենից շատ պետք է ազատ խոսք եւ այն արտահայտելու հնարավորություն:

**ԱՐՍԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ**
**Արմենական-ՌԱԿ փոխատենապետ**

ՎՐԱՑԻ ԿՈՆՖԼԻԿՏՈԼՈԳԻ ԿԱՐԾԻՔՈՎ

# «Սեփական ճակատագրի լուծման գործին պետք է մասնակցեն կոնֆլիկտի իրական կողմերը»

**Կոնֆլիկտների լուծման վերաբերյալ տարիներ շարունակ ձգձգվող եւ երբեմն էլ անարդյունք թվացող բանակցություններն ուսումնասիրելիս Վրաստանի տարածաշրջանային անվտանգության հարավկովկասյան ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Ռուսեցկին հանգել է այն եզրակացության, որ բանակցությունների ընթացքում ցուցաբերվող մոտեցումները պարզապես չեն համապատասխանում կոնֆլիկտների բնույթին: «Հարց է առաջանում միջնորդներն**



**իսկապե՞ս ցանկանում են արդյունքի հասնել, թե՞ խաղաղարար այդ մոտեցումներն ընդամենն իմիտացիա են: Կոնֆլիկտի իրական կողմերը բանակցություններին չեն մասնակցում, երրորդ երկրներն են որոշում նրանց ճակատագիրը: Երբեմն էլ միջնորդ է այն երկիրը, որը հստակ հետաքրքրություններ ունի այդ տարածաշրջանում, սա պարզապես անհեթեթություն է», «Հենարան» ակումբում ասաց Ալեքսանդր Ռուսեցկին: Փորձագետի կարծիքով, հաճախ բազմաշերտ կոնֆլիկտները պարզեցվում են, եւ բանակցությունների սեղանին հաշվի է առնվում կոնֆլիկտի միայն մեկ կողմը, օրինակ՝ էթնիկականը: «Մեր ինստիտուտը կոնֆլիկտների լուծման սկզբունքների ուսումնասիրություններ կատարելիս նշում է խաղաղարար գործընթացների դեմոկրատացման մասին, ինչը նշանակում է, որ սեփական ճակատագրի լուծման գործին պետք է մասնակցեն կոնֆլիկտի իրական կողմերը», ասաց Ալեքսանդր Ռուսեցկին: Թեպետ փորձագետը կոնֆլիկտների խաղաղ լուծման հնարավորության հավատում է, սակայն չի բացառում ոչ միայն հայ-ադրբեջանական, այլեւ վրաց-ռուսական պատերազմի հավանականությունը:**

**Անդրադառնալով վրաց-օսական պատերազմին եւ դրան անմիջապես հաջորդած հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գործընթացին, քաղաքագետը նկատեց, որ վրաց օսական պատերազմն իրականում միայն վրաց օսական չէր: «Մեր ինստիտուտի տվյալներով, պատերազմը սկսվեց ոչ թե Վրաստանի, այլ Թուրքիայի տարածքում, 2008 թվականի օգոստոսի 5-ին Քրդական աշխատավորական կուսակցությունը պայթեցրեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը: Պատերազմն իրականում էներգակիրների եւ ենթակառուցվածքների համար էր: Ես միայն մասնակի կարող եմ համաձայնել այն մտքին, որ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման մեկնարկն օգոստոսյան պատերազմի արդյունքն էր», ասաց Ալեքսանդր Ռուսեցկին: «Ազգի» այն հարցին, թե որոնք էին Թուրքիայի առաջ քաշած տարածաշրջանային կայունության պլատֆորմի իրական հիմքերը եւ որքանով այն կարելի է հաջողված կամ տապալված համարել, քաղաքագետը նշեց. «Օգոստոսյան պատերազմից ուժեղացան Ռուսաստանի դիրքերը Հարավային Կովկասում: Այստեղ Թուրքիան լուրջ վտանգ էր տեսնում իր համար եւ անմիջապես հանդես եկավ կայունության պլատֆորմի նախաձեռնությամբ: Պլատֆորմն ըստ էության Էրդողանի հայտարարությունն էր: Գոնե ես որեւէ փաստաթղթի գոյության մասին չեմ լսել»:**

**ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ**

# ԼՂՀ միջազգային ճանաչմանը նպաստող գործընթացը սկսվել է

Օրեր առաջ ԼՂՀ Արտաքին քաղաքականության եւ անվտանգության հանրային խորհուրդը հանդես եկավ Սփյուռքին ուղղված կոչով՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին զուգահեռ բարձրաձայնել նաեւ ԼՂՀ անկախության միջազգային ճանաչման հարցը: Արձագանքը սփյուռքից երկար սպասել չտվեց. Հայկական բարեգործական ընդհանուր միության «Նուբար» գրադարանի նախաձեռնությամբ Ֆրանսիայում լույս է տեսել ֆրանսալեզու «Ժամանակակից հարցերի հայկական հանդես»-ի 11-րդ համարը՝ ամբողջովին նվիրված Լեռնային Ղարաբաղին եւ ղարաբաղա-ադրբեջանական հակամարտությանը: ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայության տեղեկացմամբ՝ հանդեսում հրապարակվել են հարցազրույցներ ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի նախկին համանախագահ Վլադիմիր Կազիմիրովի, Հարավային Կովկասում Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբիի, Եվրոխորհրդարանի պատգամավոր, Հարավային Կովկասի երկրների հետ խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի անդամ Եվգենի Կիրիլովի հետ: Ֆրանսալեզու հանդեսում հոդվածներ են հեղինակել նաեւ Աշխարհաքաղաքականության ֆրանսիական ինստիտուտի դասախոս Ռայմոնդ Գեւորգյանը, իրավաբան, միջազգային իրավունքի մասնագետ Ժերար Կերկերյանը եւ Ֆրանսիայում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Հովհաննես Գեւորգյանը:

Միեւնույն ժամանակ, օվկիանոսի մյուս ափին՝ Կանադայում, Le Presse-Plus ամսագիրը «Մայրիկը հրաշալի հրաձիգ է» վերնագրով հոդված է տպագրել, որը նվիրված է ղարաբաղյան պատերազմի մասնակից Եվգենյա Առուստամյանին: Հոդվածում մասնավորապես ասված է. «Ծնվելով 1955-ին Ստեփանակերտում՝ Լեռնային Ղարաբաղի գերազանցապես հայերով բնակեցված քաղաքում, Առուստամյանը կրթություն է ստացել հետպատերազմյան Խորհրդային Միությունում: Սովորել է Երեւանում, ապա անցել է աշխատանքի, որի շնորհիվ կարողացել է ոտքի կանգնեցնել երեք որդիներին: Շրջապատում նրան «Տիկնիկ» էին անվանում բարետեսության համար», գրում է կանադական ամսագիրը՝ փաստորեն շեշտելով, որ «Ստեփանակերտը Ղարաբաղի գերազանցապես հայերով բնակեցված քաղաքներից է»: Շարունակելով՝ ամսագիրը նշում է. «1988-ին Ղարաբաղում սկսվեց պատերազմը, եւ Առուստամյանների ընտանեկան կյանքը ցնցվեց: Եվգենյայի ամուսինն ու երկու որդիները միացան Ադրբեջանի դեմ կռվող ուժերին: Ամուսինը զոհվեց, երկու որդիները վիրավորվեցին: «Ես որոշեցի վրեժ լուծել ադրբեջանցիներից: Տանը թողեցի իմ կրտսեր որդուն եւ մտա զինված ջոկատ: Ես չէի վախենում: Գիտեի, որ համազգեստ եմ կրում եւ պայքարում եմ, ինչպես ուրիշները: Հետ նայելով՝ զարմանում եմ, թե ինչպես դա արեցի», տարիներ անց Եվգենյան այս մասին պատմում է իր ընկերուհուն՝ Կարինե Դանիելյանին, որը նույնպես, ինչպես ղարաբաղցի տասնյակ կանայք, պատերազմի տարիներին պատահաբար զինվոր դարձավ», գրում է La Presse-Plus-ը:

Այնուհետեւ կանադական ամսագիրը հանդես է գալիս եզրակացությամբ. «Այս երկու կանայք վիրավորվել եւ հաշմանդամ են արդեն 16 տարի: Այժմ էլ բնակվում են գնդակոծված մի շենքում, որը լքել են դրա նախկին բնակիչ ադրբեջանցիները: Իրենք հաղթել են պատերազմում. Լեռնային Ղարաբաղը դե ֆակտո անկախ հայկական տարածք է, սակայն աշխարհը չի ճանաչել այդ փոքրիկ լեռնային երկիրը: Իսկ Եվգենյա Առուստամյանը կրկնում է. «Բայց ես ուրախ եմ, որ արել եմ հենց այդպես: Ես ոչնչի համար չեմ ափսոսում», եզրափակում է կանադական ամսագիրը:

Եթե այս, եւ վստահ ենք, հետագա հոդվածներին, հանդիպումներին, գիտաժողովներին գումարենք նաեւ այն հանգամանքը, որ աշխարհի տարբեր ծայրերում Ղարաբաղը կամ ներառվում է Հայաստանի տարածքում, կամ առհասարակ ներկայացվում է որպես անկախ պետություն, ապա ակնհայտ կլինի, որ ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացին նպաստող քայլերը սկսվել են. դրանք էլ ավելի հավակնոտ կդառնան ողջ հայության համախմբման պարագայում, այս վերջին դեպքում հասանելի կլինեն նաեւ բոլոր ազգային կարեւորագույն խնդիրների լուծումները:

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**

# Զարուհի Փոստանջյանն ընդդեմ Ներսես Նազարյանի



**2009 թ. հոկտեմբերի 22-ին, 29-ին եւ նոյեմբերի 12-ին Երեւանում անցկացված «Ընդդեմ հայ-թուրքական արձանագրությունների, մադրիդյան սկզբունքների եւ ՀՀ-ում տիրող բռնապետական ռեժիմի» բողոքի խաղաղ ցույցի ընթացքին խոչընդոտել են ոստիկաններն ու ակցիայի մասնակիցների հանդեպ ոտնձգություն իրականացրել:**

**Ակցիային մասնակցող, ԱԺ «Ժառանգություն» կուսակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանը «Ազգի» զրույցում պատմեց, որ ոստիկանները պատռել են պաստառներն ու հրել ակցիայի մասնակիցներին, ինչը քրեական օրենսգրքով համարվում է հանցագործություն: Ոստիկանների կատարածի կապակցությամբ Փոստանջյանը ոստիկանական բաժանմունքում հաղորդումներ է տվել, սակայն դրանք պատշաճ ընթացք չեն ստացել, եւ օրինազանց ոստիկանների գործողությունների վերաբերյալ քրեական գործեր չեն հարուցվել:**

**Այդ կապակցությամբ Փոստանջյանը դատարան հայց էր ներկայացրել՝ մեղադրելով Երեւան քաղաքի ոստիկանապետ Ներսես Նազարյանին անգործության մեջ: Դատավարության հերթական նիստը մեկնարկեց երեկ ՀՀ վարչական դատարանում՝ 20 րոպե ուշացումով: Սակայն նիստը չսկսված ավարտվեց: Պատճառը՝ նախագահող դատավորի՝ Սեւակ Համբարձումյանի՝ հուղարկավորության արարողությանը ներկա գտնվելու «անհրաժեշտությունն» էր. դատը հետաձգվեց մինչեւ մայիսի 18-ի ժամը 11-ը:**

**Հ. Հ.**

# Սկսեց գործել «Հայաստան» հիմնադրամի Հունաստանի մասնաճյուղը

Աթենքի «Աթինակայիկոն» սրահում մայիսի 2-ին տեղի է ունեցել «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հունաստանի մասնաճյուղի շնորհանդեսը, որին ներկա էին հունահայ համայնքի կազմակերպությունների եւ միությունների ղեկավարներ, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Հայաստանի դեսպանատան աշխատակազմը: Շնորհանդեսն առիթ դարձավ ելույթների եւ ցուցադրված տեսաֆիլմերի միջոցով ներկայացնելու հիմնադրամի իրականացրած աշխատանքները՝ նաեւ ուղենշելով Հունաստանի մասնաճյուղի մոտակա անելիքները, հատկապես այս տարվա նոյեմբերին անցկացվելիք հեռուստամարաթոնի առումով:

**Ս. Խ.**

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգի» խմբագրությունը ցավակցում է իր աշխատակից Մարիետա Մակարյանին՝ քրոջ ամուսնու՝

**Գրիշա Տեր-Անանյանի**

վաղաժամ մահվան կապակցությամբ:

AZG NEW PDF.qxd 04/05/2010 21:45 Page 1



ԱԶԳ

# Մտահոգություններ

## Մարտահրավեր լեզվական ինքնությանը

### *Ընդդեմ օտարալեզու դպրոցների բացման*

Վերջերս ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը «Լեզվի մասին» եւ «Հանրակրթության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու առաջարկով դիմել է կառավարությանը, որի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում օտար լեզվով ուսուցմամբ կրթական հաստատությունների գործունեությունը օրենսդրորեն թույլատրելն է: Դժվար է ասել՝ նախարարությունն արտաքին ինչ-որ ուժերի ճնշմա՞նն է տեղի տալիս, թե՞ հայրենի գլոբալիստների նկրտումներն են այլեւս դառնում բացահայտ, եթե հրապարակում հայտնվում է այսպիսի՝ կրթության եւ լեզվի քաղաքականությունն ու փիլիսոփայությունը հիմնիվեր փոխող օրենսդրական նախաձեռնություն: Քայլն իբր թե հիմնավորվում է «կրթության ոլորտում միջազգային համագործակցության արդյունավետության բարձրացման», «լեզվաքաղաքականության եւ կրթության բնագավառների օրենսդրության տեխնիկական հակասությունների» վերացման անհրաժեշտությամբ, մինչդեռ դրանք կոչված են ընդամենը քողարկելու բուն նպատակը՝ շահախնդրության ասպարեզ դարձնել նաեւ հանրակրթությունը: Եվ այդ շահախնդրությանը, հայկական դպրոցի հետ, զոհ կարող է գնալ նաեւ հայոց լեզուն:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի 2-րդ («Կրթության լեզուն») հոդվածի հիմնարար դրույթը («Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական եւ ուսումնական համակարգերում դասավանդման եւ դաստիարակության լեզուն գրական հայերենն է») փոխելով՝ միանգամայն ակնհայտ է, որ փոխվում է օրենքի տրամաբանությունը, որով մինչեւ այսօր լեզվի օրենքը գիտակցվում է իբրեւ օրենք հայոց լեզվի մասին: Իսկ նշված դրույթի փոփոխությամբ կամ կորստով օրենքն ամբողջովին էազրկվում է, եւ խոսքն այլեւս ինչ-որ օրենսդրական փոփոխությունների մասին չէ, այլ՝ օրենք փոխելու:

Առաջարկվող փոփոխություններով արժեզրկվում է ոչ միայն լեզվի մասին օրենքը: Եթե հայոց լեզուն այլեւս կրթության ու դաստիարակության լեզու չէ պարտադիր կերպով, ինչպես ամրագրված է օրենքում, անիմաստ է դառնում հայերենի գործածության պարտադրություն պահանջել մյուս օրենքներից («Գովազդի մասին» եւ այլն): Նույնիսկ հակառակը. դիցուք, անգլերենով կրթություն ստացող երեխայի համար հիանալի դիտողական պարագա կարող են դառնալ մայրաքաղաքի փողոցների հազարավոր անգլերեն ցուցանակներն ու գովազդները:

Մեր լեզվական ինքնությանը նետված այս մարտահրավերի վտանգավորությունը հայ մտավորականության համար, թվում էր, լինելու է այնքան ակնհայտ, որ բողոքի ալիք պիտի բարձրանար՝ ջնջելու համար ապազգային այս հերթական նկրտումը: Սակայն հայ մտավորական միտքը (թող ների այս կրկնաբանությունը) զարմանալի հանգիստ է եւ միայն երբեմն-երբեմն է թույլ տալիս իրեն հրապարակ գալ ու բանավիճել: Բանավեճի մի կողմն էլ՝ գիտնական ու գրող, պաշտոնյա ու քաղաքական գործիչ, դեմ չէ ազգադավ այս ձեռնարկումը կյանքի կոչելուն:

Վտանգավոր է, որ առաջարկվող փոփոխություններին կողմ է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, կողմ այնպիսի անվրդովությամբ, որ սկսում ես մտածել, թե գուցե մեզ եւս մի պաշտպան է պետք՝ հայ մարդու իրավունքների: Նաեւ զարմանալի է, որ Արմեն Հարությունյանը, աննախադեպ բան, առաջարկին արձագանքում է գրեթե ակնթարթորեն՝ կարծես տագնապելով, որ իր հապաղումով նախաձեռնության հանդեպ կարող է բացասական կարծիք ձեւավորվել: Մարդու իրավունքների պաշտպանը համոզված է այս փոփոխությունների բերելիք արդյունքների հարցում, որովհետեւ, նրա պնդմամբ, օտար (մասնավորապես ռուսական) կրթություն ստացածները հայկական կրթություն ստացածներից առանձնանում են «լայնախոհությամբ», եւ նրանց հետ «հեշտ է աշխատել»: Ահա այս «տեսլականով» դրվատելով ԿԳ նախարարության նախաձեռնությունը՝ մարդու իրավունքների պաշտպանն իբր ելնում է մարդու՝ ցանկացած լեզվով (այլընտրանքային) կրթություն ստանալու իրավունքի ապահովման անհրաժեշտությունից: Բայց հնարավոր համարել դպրոցահասակ երեխայի գիտակցված որոշումը՝ կրթություն ստանալ օտար լեզվով, պարզապես զավեշտալի է: Նույնչափ զավեշտալի է այս դեպքում մարդու իրավունքները հարգելու մասին խոսելը: Փոխանակ ընդունելու, որ հնգամյա երեխային պարտադրելով կրթություն ստանալ օտար լեզվով՝ բռնանում ենք աշխարհայացքն ու մտածելակերպը բնական եղանակով՝ մայրենի լեզվով ձեւավորելու նրա բնական իրավունքի վրա, մենք մեկ այլ անձի (թեկուզ ծնողի) պարտադրանքը նենգափոխում, հռչակում ենք երեխայի իրավունք: Հետո սկսում ենք պաշտպանել այդ իրավունքը:

Առաջարկվող փոփոխություններին դեմ չէ հայ խորհրդարանականը: Նրանցից Անահիտ Բախշյանի համոզմամբ՝ օտար լեզվով ուսուցմամբ դպրոցների բացումը չի վնասի մատաղ սերնդի լեզվական կրթությանը, քանի որ այսօր, երբ դեռ այդպիսի դպրոցներ չկան, արդեն իսկ ցածր է հայերենի իմացության մակարդակը: Հետեւաբար, տրամաբանում է նախկին մանկավարժը, օտարալեզու ուսուցմամբ դպրոցները վտանգավոր չեն: Զարմանալի տրամաբանություն չէ՞: Բայց ամենազարմանալին այն է, որ քաղաքական գործիչը ներքին այս մարտահրավերի ամբողջ վտանգավորությունը քննում է զուտ լեզվական տեսանկյունից՝ չտեսնելով կամ չտեսնելու տալով խնդրի քաղաքական, հոգեբանական, սոցիալական եւ մյուս առումները:

Փոփոխություններին տարբեր վերաբերմունք ունեն լեզվաբանները. նրանցից, օրինակ, Ռուբեն Սաքապետոյանի կտրուկ մերժողական խոսքին Նարինե Դիլբարյանը հակադրում է իր պաշտպանական «տրամախոսությունը»՝ հօգուտ օտարալեզու դպրոցի:

Այսպիսով՝ վտանգի համընդհանուր գիտակցում չկա: Եվ եթե երբեմն առկայծում էլ են դրանք, ապա շուտով կորչում են համատարած անտարբերության գորշ պատկերի վրա: Առավել զարմանալին այն է, որ հայոց դպրոցի համար նյութվող այս դավի առաջ անտարբեր ու համր է հայ մանկավարժը: Համենայն դեպս, առ այսօր նրանցից որեւէ մեկի տագնապին կամ մտահոգությանը հրապարակավ ականջալուր չեղանք, իսկ հայ ուսուցչի անտարբերությունը կրթական գործի մեր ղեկավարները հաստատ կդարձնեն փաստարկ իրենց անելիքը հասարակության աչքին ոչ միայն անվտանգ, այլեւ նույնիսկ ազգանպաստ ներկայացնելու համար:

Խնդրի վերաբերյալ քննարկումներում եւ բանավեճերում համարյա միշտ խոսվում է օտարալեզու ուսուցմամբ դպրոցների մասին, մինչդեռ նախագծում խոսքը կրթական գործունեություն իրականացնող նաեւ այլ հաստատությունների մասին է («Հայաստանի Հանրապետության տարածքում... օտար լեզուներով ուսուցման ոչ հանրակրթական եւ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել...»), որից պիտի ենթադրել, որ շուտով մենք ունենալու ենք օտարալեզու ուսուցմամբ նախադպրոցական հաստատություններ նույնպես: Ահա այսպես հայոց դպրոցի առանց այն էլ խարխուլ շենքը քանդվում է արդեն խոր հիմքից: Եվ այդ հիմնավեր գործին, մոդային տրվելու ինքնամոռացությամբ, շուտով կլծվի հասարակության մի լայն հատված: Մնում է պատկերացնել, թե իրենց զավակներին անգլիական, ռուսական կամ ֆրանսիական մանկապարտեզ հանձնելու համար ի՛նչ զոհողությունների կգնան հայ մայրերն ու հայրերը: Ու այդ բանն անելուն նրանց կմղի ոչ միայն հարեւանից ու բարեկամից հետ չմնալու հայկական բնավորությունը, այլեւ ոչ հեռավոր անցյալի հիշողությունը. նրանք նորից նոր կհիշեն, թե խորհրդային ժամանակներում ի՛նչ նախապատվություններ կային ռուսական կրթություն ունեցողների համար. դրանք արտոնություններ էին, որոնցով զինված մեր ռուսախոս եղբայրներն ու քույրերը ներողամիտ ու նույնիսկ քամահրական վերաբերմունք ունեին ազգային լեզվով կրթություն ստացածների հանդեպ: Եվ մենք հետ ենք բերում այդ ժամանակները: Հետ ենք բերում, որ հայոց լեզվով կրթություն ստացածին հիմա քամահրել սկսեն անգլիական, ռուսական, ֆրանսիական դպրոցի սովորողն ու շրջանավարտը: Գուցե նաեւ՝ թուրքական:

Փոփոխություններով առաջարկվում է թույլատրել օտարալեզու ուսուցմամբ թե՛ մասնավոր, թե՛ պետական հաստատությունների գործունեությունը, եւ դժվար չէ կռահել՝ ինչու՛: Օտարալեզու ուսուցմամբ պետական դպրոցներն իրենց բոլոր առավելություններով իհարկե՛ նախատեսվում են երկրիս ունեւոր եւ պաշտոնեից դասի ժառանգների համար (ինչպես, օրինակ, պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետը), իսկ մասնավորները բաժին կընկնեն աղքատ խավի երեխաներին (ինչպես, օրինակ, ՀՀ-ում գործող բոլոր մասնավոր համալսարանների նույն՝ իրավաբանական ֆակուլտետները): (Գթասի՜րտ են մեր օրինաստեղծները. նրանք օրենք են գրում նաեւ հասարակ մարդկանց համար):

Այո, օտարալեզու ուսուցմամբ դպրոցները կսպասարկեն հիմնականում ունեւոր խավին, որովհետեւ դժվար է պատկերացնել, թե այդուհետեւ հայ որեւէ մեծահարուստի զավակ կհաճախի հայկական դպրոց՝ թողած հեռանկարի եւ հավակնությունների առումով անմրցելի օտարալեզու դպրոցները: Տրանք հիմնադրման առաջին իսկ օրվանից կվերածվեն «էլիտար» հաստատությունների՝ այդպիսով կամա-ակամա նսեմացնելով հայկական դպրոցը, այդ դպրոցի աշակերտին եւ ուսուցչին: Եվ քանի որ վերջիններս մեծ թիվ են կազմում, ուրեմն հանրության գիտակցության մեջ նսեմացած է երեւալու հասարակության մի լայն շերտ: Սոցիալական բեւեռացվածությամբ եւ հոգեբանական մեծ խզվածքով բնութագրվող հայ հասարակությունն ահա այսպես կկորցնի իր ներսում գոյացած սոցիալական անջրպետը փոքր-ինչ չեզոքացնող վերջին գործոնը՝ հանրակրթական դպրոցը, որտեղ, առանձին դեպքեր հաշվի չառած, նոր սերունդը հոգեբանորեն վերջնականապես շերտավորված չէ:

Գաղտնիք չէ, որ հայոց դպրոցին մեծ հարված է հասցրել 1990-ականներին ծայր առած հայրենալքությունը, ինչի հետեւանքով հարյուրհազարավոր հայորդիներ մայրենի դպրոցներում չուսանեցին եւ այլեւս երբեք չեն ուսանի: Այսօր էլ հայոց դպրոցը շարունակում է աշակերտազրկվել: Կրթօջախները երբեմն նույնիսկ անառողջ մրցակցության մեջ են՝ ամեն գնով աշակերտ եւ հատկապես առաջինդասարանցի հավաքագրելու համար: Շատ դպրոցներում դասարան բացվել-չբացվելու խնդրի լուծումն ուղղակիորեն կախված է եւս մեկ աշակերտ ունենալու կամ չունենալու հանգամանքից: Մեր դպրոցի համար ահա այս անմխիթար պայմաններում է ասպարեզ գալու անողոք ու զորեղ թշնամին՝ օտար դպրոցը, որի թիկունքին կանգնած է գլոբալիզացիան, ամեն գնով եւ օր առաջ «միջազգայնանալու» մարմաջը, ինչպես նաեւ մեր սեփական օտարամոլությունն ու հայ ունեւորի լայն բացված գրպանը: Օտար դպրոցի թիկունքին սարի պես այս կանգնածները, սակայն, չարի պես եւ դեմ հանդիման են կանգնած հայոց դպրոցին՝ ի զորու եթե ոչ ոչնչացնելու (դա կանեն հետո), ապա առնվազն թուլացնելու, տկարացնելու նրան: Իսկ առայժմ օտար դպրոցները հայկական դպրոցներից կխլեն հազարավոր հայ մանուկների, որպեսզի իրենց գլոբալ ծոցում բուծեն լեզվուրացներ ու ազգամոռներ, ազգային գաղափարներից «սրբագրված»՝ ինտեգրված հայեր: Ուրի՛շ հայեր:

Չեմ հավատում, թե սա է ԿԳ նախարարության «տեսլականը»: Իսկ եթե, այնուամենայնիվ, սա է, ուրեմն նա... ճիշտ ճանապարհի վրա է:

**Հ.Գ.** *Ենթադրվում էր, որ լեզվի օրենքում փոփոխություններ կատարելու օրենսդրական նախաձեռնության հեղինակները պետք է ուշադիր լինեին՝ գոնե լեզվական մեղանչումներ թույլ չտալու համար: Սակայն ԿԳ հայրենի նախարարությունում ըստ երեւույթին հայկական կրթությամբ բանասեր չի գտնվել, որ աչքի անցկացներ նախագիծն ու բացառեր, օրինակ, այս անհեթեթությունը. «Օրենքի ընդունումը կկարգավորի սովորողների սոցիալական խնդիրների ..... հարցը .....»: Կամ՝ ի՞նչ պետք է հասկանալ հետեւյալ նախադասությունից. «Ներկայումս «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանափակում է միջազգային հեղինակություն ունեցող միայն հանրակրթական այլընտրանքային հաստատությունների մուտքը Հայաստանի Հանրապետություն, այն դեպքում, երբ որակյալ կրթություն ստանալու պահանջարկը մեծ է, իսկ արտերկրում դա ապահովելու հնարավորություն ունեցողներինը՝ քիչ»: Ընդգծված երկրորդական նախադասության միտքը կռահել կարելի է միայն: Դրությունը մասամբ կշտկվեր, եթե «ունեցողներինը» բառի փոխարեն գործածված լիներ «ունեցողները»: Ի դեպ, այս նախադասության մեջ գործածված «մեծ» ու «քիչ»-ը հականիշներ չեն, ինչպես ներկայացված է նախագծի հիմնավորման մեջ:*

*«Օրենսդրական այս նախաձեռնությամբ առաջարկվում է հնարավորություն տալ, որպեսզի .....», ասվում է օրենքի հիմնավորման մեջ, եւ դարձյալ չի գտնվել մի բանասեր, որ ասեր՝ «հնարավորություն տալ, որպեսզի» ձեւակերպումը ռուսական մտածողության հետեւանք է, իսկ մաքուր հայը կասի՝ «հնարավորություն տալ, որ»:*

*Կարծում եմ՝ հենց միայն այս (նաեւ չնշված) մեղանչումները շտկելու համար կառավարությունն օրենքի նախագիծը պիտի հետ ուղարկի:*

*Բայց ամենածանրը, իհարկե, մեղանչումն է հայոց լեզվի եւ հայոց դպրոցի հանդեպ: Եվ այս մեղանչման համար օրենքի նախագիծը ոչ թե պիտի հետ ուղարկել, այլ մերժել անվերադարձ:*

**ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ**
**Վանաձոր**

---

ԲՈՍՏՈՆ

## Հանդիպում «Յամերների» գյուտարար Ռայմոնդ Տամատյանի հետ

**Ամերիկահայ մի շարք առողջապահական կազմակերպությունների, այդ թվում՝ բժշկական, դեղագործական եւ ատամնաբուժական ընկերությունների համատեղ ջանքերով ապրիլի 17-ին Բոստոնի «Թաջ» հյուրանոցում գարնանային գալա-հանդիպում է տեղի ունեցել բժշկագիտական սարքավորումների ասպարեզում հայտնի գյուտարար դոկտ. Ռայմոնդ Տամատյանի (Raymond Damadian) հետ:**

**Հայաստանում թե սփյուռքում քչերը գիտեն, երեւի, որ Տամատյանի մի շարք գիտական-տեխնոլոգիական նվաճումների արդյունքում ստեղծվել է մագնիսական ռեզոնանսային պատկերման (ժողովրդական լեզվով՝ «Յամերների») հույժ կարեւոր (MRA) սարքը, որը մեծ դերակատարում ունի մարմնի բազմաշերտ ուսումնասիրությունների ճշգրտման գործում:**



**1970-ին նա իր իսկ հայտնաբերած գիտական սկզբունքների հիման վրա ստեղծում է առաջին մագնիսական ռեզոնանսային սքաները: 1978-ին հիմնել է «Ֆոնար» ընկերությունը, որն արդեն 1980-ին թողարկել է աշխարհում առաջին կոմերցիոն «Յամերը»: 1981-ին նա ճանաչված գիտնական էր: Յոթ տարի անց՝ 1988-ին նախագահ Ռոնալդ Ռեյգանի ձեռամբ նա ստանում է (իր գործընկերոջ հետ) տեխնոլոգիաների զարգացման ասպարեզում շնորհված «Ազգային մեդալը՝ անհատական նվիրման համար»:**

**Մի տարի անց նա «մուտք է գործում» Մ. Նահանգների արտոնագրման գրասենյակի «Ազգային գյուտարարների պատվո սրահ» եւ իր արժանի տեղը գրավում այնտեղ այնպիսի հայտնի տեխնոլոգների կողքին, ինչպիսիք են Օրվիլ եւ Ուիլբուր Ռայթերը, Հենրի Ֆորդը, Թոմաս Էդիսոնը եւ Ալեքսանդր Գրեհեմ Բելը, որոնց հայտնագործությունները շրջադարձային են եղել աշխարհում գիտական զարգացման ասպարեզում:**

**Լինելով առաջատար նորարարական ընկերություն, «Ֆոնարն» այժմ ունի 400-ից ավելի աշխատողներ: Նրանց ուժերով 300 «Յամերներ» են տեղադրվել աշխարհի տարբեր երկրներում ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հաղորդագրության, որից թարգմանաբար վերցրել ենք նյութը:**

**Ավելացնենք պարզապես, որ դոկտ. Ռայմոնդ Տամատյանն ու դոկտ. Ավետիս Խաչատրյանը (համազիգոտային ընտանեկան հիպերխոլեստերոլեմիայի գենետիկայի բնագավառից), որի մասին «Ազգը» գրել էր 2009-ի հուլիսի 29-ի համարում, իրոք արժանի են ստանալու Նոբելյան մրցանակ, ինչպես քանիցս նշել են իրենց օտարազգի գործընկերները:**

Հ. Ծ.

AZG NEW PDF.qxd 04/05/2010 21:44 Page 1



# Չերչիլի «նամակը»` բրիտանացի լորդերին

*Հայոց ցեղասպանության բրիտանական քննարկումներին մեր թերթը բազմիցս է անդրադարձել: Միացյալ Թագավորության մաս կազմող Ուելսում, Շոտլանդիայում ընդունվել են Ցեղասպանությունը ճանաչող հայտարարություններ, բրիտանական պառլամենտի ստորին` Համայնքների պալատը նույնպես ընդունել է նման հայտարարություն, այժմ հայկական բանաձեւը գտնվում է Լորդերի պալատում: Մենք նաեւ տեղեկացրել ենք, թե ինչ քննարկումներ են տեղի ունեցել Բրիտանիայի պառլամենտի վերին պալատում, լորդերի մի խումբը` բարոնուհի Քոքսի գլխավորությամբ, պահանջում է Հայոց ցեղասպանության ճանաչումը, ոմանք էլ շեշտում են Թուրքիայի հետ «բարեկամական» կապերը, իսկ «փայլուն» պաշտոնական գիտելիքներով լորդերից մեկը նույնիսկ հայտարարեց. «Մենք խոսում ենք քրիստոնյա-մուսուլմանական տարրական բախումների մասին, անկարելի է այդ իրադարձությունները ցեղասպանություն որակել»: Այս եւ նման կերպ արտահայտվող բրիտանացի լորդերից շատերը թերեւս ծանոթ չեն Մեծ Բրիտանիայի մեծագույն ղեկավարներից մեկի` վարչապետ Ուինսթոն Չերչիլի հուշագրություններին, չգիտեն, որ Չերչիլն առաջիններից էր, որ արտասանեց «Հայոց ցեղասպանություն» բառերը, որ միայն Չերչիլի թողած գրությունները բավական են ապացուցելու ոչ միայն Բրիտանիային, այլեւ բոլոր չընդունած երկրներին, որ Ցեղասպանությունը եղել է եւ չի կարող մոռացվել (նույնիսկ ճանաչումից հետո- Հ. Ա.), այն հանցագործություն է մարդկության դեմ:*



Ուինսթոն Չերչիլը գրում է. «Ռուսաստանում եւ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները ճակատագրական եղան հայ ժողովրդի համար: Համաշխարհային առաջին պատերազմի սկզբում հայերը սարսափելի ջարդերի ենթարկվեցին, իսկ արդեն պատերազմի ավարտին ենթարկվեցին զանգվածային ոչնչացման»: Չերչիլը հայ ժողովրդի ողջ դժբախտությունը իր հուշագրության մեջ պայմանավորում է «հայերի հայրենի տարածքների աշխարհագրական դիրքով». «Դարեր շարունակ հայկական տարածքները հրապուրել են տարբեր ազգերի նվաճողներին, սկզբում նրանք պարսիկներն ու հռոմեացիներն էին, հետո արդեն եկան մուսուլմանական ցեղերը` մոնղոլներն ու սելջուկ թուրքերը», այստեղ «բացահայտվում» է եւս մեկ ճշմարտություն. «հայերի տարածքներ» եւ «մուսուլմանական նվաճող ցեղեր»: «Այնուհետեւ այս պայքարի մեջ մտան ռուսները,- շարունակում է Չերչիլը,- որոնց հակառակորդները դարձան թուրքերն ու պարսիկները: Երբ սկսվեց Առաջին համաշխարհայինը, Հայաստանը բաժանված էր երկու մասի` Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ: Մշտապես տառապող հայ ժողովուրդը պարբերաբար ենթարկվում էր ջարդերի, նրանք ոչ մի հնարավորություն չունեին պաշտպանվելու, միայն, թերեւս, գաղտնի կազմակերպությունների շնորհիվ: Պատերազմը բերեց նոր դժբախտություններ հայերին: Բալկանյան մարտերից հետո «պանթուրքական» գաղափարակիրները շատացան Թուրքիայում, նրանք գտնում էին, որ թուրքական պետության մեջ բացառապես պետք է ապրեն թուրքերը, առավելագույնը` այլ մուսուլման ազգեր, ով մուսուլման չէր, պետք է կորչեր գրողի ծոցը: Թուրքական այս նպատակին Եվրոպան տեղյակ չէր, հայերը, սակայն, շատ լավ հասկանում էին, թե ինչ է կատարվում: Պատերազմում ունեցած անհաջողություններում թուրքերը, օգտվելով առիթից, մեղադրեցին իրենց արեւելյան վիլայեթներում ապրող հայերին, նշելով, թե նրանք լրտեսություն են արել հօգուտ ռուսների: 1915-ին թուրքական կառավարությունը Փոքր Ասիայում ապրող հայերի նկատմամբ սկսեց իրականացնել մասսայական բնաջնջման եւ տեղահանման քաղաքականություն: 300-400 հազար հայեր` կանայք եւ երեխաներ, փախան ռուսական տարածքներ, նաեւ Պարսկաստան եւ Մերձավոր Արեւելք: Մոտավոր հաշվարկներով այս քաղաքականության զոհ դարձան 1,4 մլն հայեր, որոնցից կեսից ավելին սպանվեցին: Ոչ մի կասկած չկա, որ այս ամենը նախօրոք պլանավորված քաղաքականության հետեւանք էր: Պատերազմը թուրքերին տվեց գերազանց հնարավորություն` վերջնականապես ազատվելու «այլ ռասաներից»: Թուրքական հաշվարկը պարզ էր. եթե նույնիսկ նրանց ներկայացրած դաշինքը պարտվում էր պատերազմում, նրանք իրականացրած կլինեին Թուրքիայի «մաքրումը» եւ շատ ավելի շահեկան դուրս կգային պատերազմից, քան էին մինչեւ պատերազմը»:

Այնուհետեւ Չերչիլն անդրադառնում է նաեւ թուրքերի հարձակումներին դեպի Կովկաս` ներկայացնելով դրանք որպես «հայերի ոչնչացման քաղաքականության շարունակում»: «Երբ ռուսները գրավեցին Էրզրումը, իսկ ԱՄՆ-ը մտավ պատերազմի մեջ, հայերի շրջանում որոշ հույսեր արթնացան, սակայն ռուսական հեղափոխությունը ցրեց այդ հույսերը: 1918-ին ռուսական բանակը լքեց փոքրասիական ռազմաճակատը, իսկ երբ հայտնվեցին թուրքերը, հայ բնակչությունը կարողացավ որոշ ժամանակով զսպել թուրքերի առաջխաղացումները: 1918-ին կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ազդանշան եղավ թուրքերի համար` սեփականացնելու նախկինում ռուսներին պատկանող հայկական հողերը` Կարսը, Արդահանը: Միեւնույն ժամանակ ռազմաճակատում դաշնակից զորքերն առաջ էին գնում. բրիտանական, ֆրանսիական եւ ամերիկյան զորքերը Ֆրանսիայում ջարդեցին գերմանական զորքին: Անգլո-հնդկական զորքը գրավեց Պաղեստինն ու Սիրիան: Փաստորեն այն ժամանակ, երբ թուրքերը Կովկասում առաջ էին շարժվում, նրանց պետությունը փլուզվում էր: Այս ամենից շարունակվում էին հայ ժողովրդի տառապանքները, որոնք, թվում է, անվերջանալի են: Բրիտանիան, անշուշտ, գիտեր այդ տառապանքների մասին: Պարզապես կարծիքներ էին տարբեր. ոմանք խոսում էին հայերի բնաջնջման մասին, ոմանք էլ ամեն բանում մեղադրում էին հայերին: Սակայն ճշմարտությունն այն է, որ հայերի ոչնչացման փաստն առաջացրել էր անգլերեն խոսող բազմաթիվ տղամարդկանց եւ կանանց ցասումը»:

Պատերազմն ավարտվեց Թուրքիայի դաշնակիցների պարտությամբ, եւ, ինչպես գրում է Չերչիլը, հայերը մեծ հույսեր ունեցան, որ վերջապես իրենց հարցն արդարացի լուծում կստանա. «Սակայն հաղթող դաշնակիցներից ոչ մեկը, ոչ Բրիտանիան, ոչ Ֆրանսիան, ոչ Իտալիան կամ ԱՄՆ-ը պատրաստակամություն չհայտնեցին օգնելու հայերին: Մնացած բոլոր հարցերում նրանք միասնական կարծիքներ էին հայտնում, իսկ երբ հերթը հասավ հայկական հարցին, սկսեցին գլուխները տարուբերել: 1920 թ. մարտի 12-ին հայկական հարցը հանձնվեց Ազգերի լիգային, բայց վերջինս չուներ ոչ միջոցներ, ոչ զինվորներ` հարցին լուծում տալու համար: Օգոստոսի 10-ին, այնուամենայնիվ, Թուրքիային ստիպեցին ստորագրել Սեւրի պայմանագիրը, ըստ որի Թուրքիան պետք է ԱՄՆ նախագահ Վիլսոնին վերապահեր Հայաստանի հետ ունեցած սահմանների որոշումը` ճանաչելով Հայաստանի անկախությունը: 1920-ի դեկտեմբերին Վիլսոնը որոշեց, որ հայ-թուրքական սահմանը պետք է անցնի Տրապիզոնով, Էրզրումով, Վանով եւ Բիթլիսով: Սակայն հայկական պետությունը գոյություն ուներ միայն թղթի վրա: 1920-ի հունվարին թուրքերը հարձակվեցին ֆրանսիացիների վրա Կիլիկիայում, մայիսին բոլշեւիկները վերջնականապես գրավեցին Էրիվանի հանրապետությունը, ե՛ւ այստեղ, ե՛ւ Կիլիկիայում հայերը կրկին ենթարկվեցին ջարդերի, միայն Կիլիկիայում կոտորվեցին 50 հազար հայեր: Հոկտեմբերին Անգորայի համաձայնագրով Ֆրանսիան էվակուացրեց Կիլիկիան: Լոզանի կոնֆերանսով վերջնական խաղաղություն հաստատվեց Թուրքիայի եւ մեծ տերությունների միջեւ: Պատմությունը դեռ երկար կփնտրի «Հայաստան» անունը», եզրափակվում է Չերչիլի հուշագրությունը:

Հայ ժողովրդի աննկուն կամքի շնորհիվ պատմությունն այսօր «Հայաստան» անունը չէ, որ պետք է փնտրի, այլ հենց պատմությունը` իրական, փաստացի, ճշգրիտ պատմությունը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Թայմս-սքվերի գործով ձերբակալվել է մի կասկածյալ

Նյու Յորքի գլխավոր հրապարակում` Թայմս-սքվերում մայիսի 1-ի երեկոյան պայթուցիկով լցված փորձի կատարելության ձախողված փորձի կապակցությամբ ձերբակալվել է առաջին կասկածյալը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ դա պակիստանյան ծագումով ամերիկացի է, որի անունն է Շահզադ Ֆայզալ եւ որը մշտապես բնակվում է Կոնեկտիկուտում:

30-ամյա կասկածյալը Քենեդիի անվան օդանավակայանից փորձում էր թռչել Դուբայ: CNN-ի տվյալներով, ներկայումս ՀԴԲ գործակալները որոնում են եւս մի քանի անձանց, որոնք մտադիր են հարցաքննել պայթուցիկության փորձի կապակցությամբ: Այլ մանրամասնություններ չեն հաղորդվում:

Թայմս-սքվերում ականված ավտոմեքենայի մեջ հայտնաբերված ռումբը ինչ-ինչ պատճառներով ամբողջ հզորությամբ չէր գործել: Իշխանությունները միջադեպը բնութագրել էին որպես պայթուցիկության փորձ: Դրա պատասխանատվությունը ստանձնել է «Թալիբան» շարժման պակիստանյան թեւը:

Ոստիկանները քննության ընթացքում կարողացել են գտնել ականված ավտոմեքենայի նախկին տիրոջը: Հարցաքննության ժամանակ նա պատմել է, որ մեքենան վաճառել է լատինաամերիկյան կամ մերձավորարեւելյան արտաքինով մի մարդու: Որոշ տեղեկությունների համաձայն, խոսքը հենց կասկածյալ Ֆայզալի մասին է:



# ԱՄՆ-ը ունի 5113 միջուկային մարտագլխիկ

1961-ից ի վեր առաջին անգամ ամերիկացիները հրապարակել են տվյալներ իրենց միջուկային զինանոցի վերաբերյալ: Պենտագոնը երեկ այդ քայլին է դիմել Միջուկային զենքի չտարածման պայմանագրի կատարմանը նվիրված կոնֆերանսի կապակցությամբ, որն անցկացվում է Նյու Յորքում:

Ռազմական գերատեսչության տարածած հայտարարության մեջ նշվում է, որ «միջուկային զենքի համաշխարհային պաշարներին վերաբերող տեղեկատվության թափանցիկությունը անչափ կարեւոր է տվյալ զենքի տարածումը կանխելու եւ այն վերահսկելու առումով»:

Պենտագոնը մանրամասնել է, որ 1967-ին ԱՄՆ-ը ունեցել է 31255 մարտալիցք, դրանից հետո միջուկային զինանոցը կրճատվել է 84 տոկոսով, իսկ 1989-ի համեմատությամբ մարտալիցքերի քանակը կրճատվել է 75 տոկոսով:

2010-ի ապրիլի 8-ին Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի նախագահները ստորագրեցին Ռազմավարական հարձակողական սպառազինությունների (ՌՀՎ) կրճատման ռուս-ամերիկյան նոր` 3-րդ պայմանագիրը: Այն նախատեսում է, որ 7 տարվա ընթացքում ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը միջուկային մարտալիցքերի առավելագույն թիվը կիջեցնեն 1550 միավորի, իսկ արձակման միջոցների թիվը` 800-ի: Ըստ որում, արձակման օպերատիվ միջոցների թիվը կսահմանափակվի 700 միավորով:

# Ֆրանսիան տուգանվեց Տայվանին կաշառքով ռազմանավ վաճառելու համար

Միջազգային իրավարար դատարանը Ֆրանսիայի կառավարությանը եւ պետությանը ենթակա «Թալես» ընկերությանը 830 մլն դոլար տուգանքի է դատապարտել 1991-ին Տայվանին «Լաֆայեթ» դասի ֆրեգատներ վաճառելիս կաշառք տված լինելու համար: BBC-ն հաղորդում է, հաղթել էր ֆրանսիական «Թալեսը»: 1991-ին ստորագրվել էր յուրաքանչյուրը 460 մլն դոլարանոց «Լաֆայեթ» դասի 6 ֆրեգատի մատակարարման պայմանագիր: Այդ գումարը ռազմանավերի վրա Տայվանի նախատեսածի գրեթե կրկնապատիկն էր: «Թալեսի» մրցակիցներն առաջարկել էին ավելի էժան տարբերակներ:



որ Ֆրանսիան այդ գումարը Տայվանի կառավարությանը պետք է վճարի որպես փոխհատուցում:

«Թալես» (նախկին Thomson CSF) ընկերությունը հայտարարել է, որ տուգանքի ընդհանուր գումարի մեջ իր բաժինը կազմում է 27 տոկոս կամ 230 մլն դոլար, եւ որ ինքը մտադիր է գանգատարկել վճիռը: Ռազմանավերի վաճառքին մասնակցած Ֆրանսիայի պաշտպանության նախարարությունը չի մեկնաբանել միջազգային դատարանի վճիռը:

1990-ականների սկզբներին Տայվանը ֆրեգատների գնման նպատակով մրցույթ էր հայտարարել, որտեղ

Միջազգային դատարանի տվյալներով, Ֆրանսիայի կառավարությունը եւ «Թալեսը» տայվանյան մրցույթում հաղթել են կաշառքների միջոցով: Գործի քննությունը սկսվեց 1993-ին, երբ Տայվանի ափերի մոտակայքում հայտնաբերվեց երկրի ծովուժի ռազմական գնումների գործակալության ղեկավար Ին Չին Ֆենի դիակը: 2001-ին Տայվանի իշխանությունները հայտարարեցին, որ Ֆրանսիայի հետ կնքված գործարքի մեջ հայտնաբերել են կաշառատվության նշաններ:

# Բաղդադի շուրջը անվտանգության պարիսպ է կառուցվում

Իրաքի իշխանությունները սկսել են Բաղդադի շուրջը կառուցել անվտանգության պարիսպ, որը քաղաքը կանխելու հարեւան նահանգներից: Այդ մասին հայտարարել է Բաղդադի օպերատիվ հրամանատարության ներկայացուցիչ, գեներալ-մայոր **Քասիմ Աթթան** «Ալ Իրաքիա» հեռուստաալիքին տված հարցազրույցում:

Նախատեսված է պարսպի շինարարությունն ավարտել 2011-ի կեսերին: Պարիսպը կազմված է բետոնե ցանկապատերից, խանդակներից եւ կունենա 8 հսկիչ անցակետ: Միայն այնտեղից կարելի է մուտք գործել Իրաքի մայրաքաղաք, նշում է ՌԻԱ գործակալությունը:

Աթթայի խոսքերով, դիտարկման արդիական համակարգերով հանդերձավորված պատնեշը կոչված է «փակելու ահաբեկիչների ճանապարհը եւ նրանց թույլ չտալու թափանցել Բաղդադ»:

Անվտանգության պարսպի շինարարության ավարտից հետո քաղաքի ներսում աստիճանաբար հանվելու են բետոնե արգելափակոցները եւ հսկիչ անցակետերը:

Միջդավանանքային կոտորածների կանխման նպատակով (հատկապես 2006-2007 թթ.) Բաղդադի օպերատիվ հրամանատարությունը ամբողջ քաղաքում ստեղծել է բազմաթիվ հսկիչ անցակետեր, ինչպես նաեւ առանձին շրջանները բաժանել է բետոնե ցանկապատերով: Դրանք ճանապարհներին անվերջանալի խցանումների պատճառ են դառնում եւ քաղաքացիների դժգոհությունը հարուցում, սակայն Իրաքի մայրաքաղաքը չեն փրկում խոշոր ահաբեկչություններից եւ բազմաթիվ պայթյուններից, որոնց հետեւանքով միայն վերջին ամիսներին հարյուրավոր մարդիկ են զոհվել:

# Երուսաղեմի հայկական սրբավայրերը

Մոսկվայի «Սլովո» հրատարակչությունը վերահրատարակել է **Էմմանուել վարդապետ Աթաջանյանի** եւ **Գեւորգ Մադոյանի «Երուսաղեմի հայոց սրբավայրերը»** գիրքը, որը Երուսաղեմի եւ նրա արվարձանների Հայոց սրբավայրերի եթե ոչ ամբողջական, ապա հնարավորինս տարողունակ պատմատեղեկատվական ակնարկների ժողովածու է: Գրքում սրբավայրերի պատկերները համադրվում են հայերեն-անգլերեն-ռուսերեն ծանոթագրություններով: Կարդալով այդ փոքրիկ պատմությունները՝ հաճելիորեն զարմացանք, քանի որ փոքրիկ, տաս-տասնհինգ տողանոց պատմություններն իրոք տեղեկատվական խտանյութեր թվացին մեզ՝ այնքան շատ ինֆորմացիա կրող, որ գրքի վերջին էջը շուռ տալուց հետո մի հաստափոր հատոր ընթերցած կարծես լինեինք: Ժլատ տեքստերով, հուշարձանների հարուստ, գեղեցիկ պատկերներով հատվածներում չքնաղ պատմություններ կան, որ հայ եկեղեցու, եւ ինչու չէ՝ հայոց պատմության մոռացված գոհարներ են մատուցում եւ մեզ, եւ օտարներին:

Ահա դրանցից մի քանիսը. Ս.Թորոս եկեղեցին գտնվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մայր տաճարից մի փոքր դեպի արեւելք: Ավանդության համաձայն՝ եկեղեցու կառուցումը կապվում է Կիլիկիո Հեթումյան հարստության հետ եւ թվագրվում է մոտավորապես 1266-1300 թթ.: Ս. Թորոս եկեղեցին հայտնի է նաեւ որպես հնագույն ձեռագրերի մատենադարան, ուր պահվում է գրեթե 4000 պատմամշակութային բացառիկ արժեք ունեցող ձեռագիր ու մանրանկար:




Սուրբ Հարության տաճարը գտնվում է Հին Երուսաղեմի կենտրոնում, որի մեծ մասը զբաղեցնում է արաբական շուկան, այն շրջապատում է եւ այս մեծակառույց շինությունը: Հույն եւ Լատին եկեղեցիների հետ, Հայ եկեղեցին տաճարի գլխավոր պահապան-հոգատարներից է: Տաճարն այլազան եկեղեցիների եւ մատուռների ամբողջություն է: Այստեղ կան սրբավայրեր, ուր քույր եկեղեցիները պաշտամունք անցկացնելու իրավունքներ ունեն: Դրանց զուգահեռ՝ Հայ եկեղեցին բացառիկ իրավունքներ ունի ի թիվս տարբեր խորանների եւ սեղանների, նաեւ՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եւ Երկրորդ Գողգոթա եկեղեցիներում: Մինչեւ ԺԵ դարը մեզ է պատկանել նաեւ Գողգոթան՝ Հիսուսի խաչելության վայրը:

Ի դեպ՝ հետաքրքրական պատմություն կա Երկրորդ Գողգոթան կառուցելու հետ կապված (սա զուտ հայկական մոտեցում պետք է համարել, որովհետեւ երկրորդ խաչելության վայր լինել չի կարող, բայց...): Գրքում կարդում ենք, որ բարդ խարդավանությունների հետեւանքով Գողգոթայից զրկվելով՝ 1422 թ. հայերը կառուցում են Երկրորդ Գողգոթան կամ Վերնատուն կոչվող եկեղեցին (1439 թ., Մարտիրոս սրբազան արքեպիսկոպոսի պատրիարքության շրջան, 1419-1450): Այստեղ է գտնվում Չարչարանաց սյան մի մասը, որին կապեցին Հիսուսին՝ չարչարանաց եւ ծաղրանաց ենթարկելով նրան:

Ահա այսպիսի պատմությունները եւ Երուսաղեմի հայկական սրբավայրերի պատկերները՝ նրանց գտնվելու վայրի հստակ ցուցումներով, գրքում տասնյակներով են:

Օգտվելով գրքից՝ տեղեկացնենք, որ արդեն Զ դարում Ավետյաց երկրում 70-ից ավելի հայկական եկեղեցիներ կային, իսկ շուտով հիմնվեց նաեւ Հայոց պատրիարքությունը: Այսօր Տնօրինական ամենակարեւոր վայրերում պարտադիր տիրույթներ ունի Հայ եկեղեցին: Ս. Երկրում Հայ եկեղեցին կոչվում է Հայոց ուղղափառ եկեղեցի՝ Արեւելյան ուղղափառներին պատկանելու եւ ցայսօր դավանանքն անբիծ պահելու համար:

«Երուսաղեմի հայոց սրբավայրերը» գիրք-ուղեցույցը Երուսաղեմում հայտնված եւ սրբավայրերով հետաքրքրված հայի եւ ինչու չէ՝ նաեւ օտարերկրացու համար անփոխարինելի ուղեցույց է, միաժամանակ վկայություն մեր հավատի՝ այդ հուշարձանների հետ կապված պատմության:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Արարատից Եվրոպա

**Մայիսի 4-ին Հայաստանի Ազգային գրադարանի նիստերի սրահում ցուցադրվեց «Հայկ» եւ «Իկար» կինոստուդիաների նկարահանած «Արարատից Եվրոպա» ֆիլմը: Սցենարի հեղինակներն են՝ Գագիկ Գինոսյան, Արսեն Հակոբյան, ռեժիսոր եւ օպերատոր՝ Արտակ Ավդալյան, պրոդյուսեր՝ Սարգիս Պետրոսյան:**

**Մինչ ցուցադրությունը, Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը ողջունեց ֆիլմի ստեղծումը, նշեց, որ անհրաժեշտ է այն թարգմանել օտար լեզուներով եւ տարածել աշխարհում:**

**Ֆիլմում ներկայացվում է հայկական եկեղեցաշինությունը Եվրոպայում, եվրոպական եւ հայկական եկեղեցաշինությունների փոխազդեցությունները:**

**«Աստված հայկական լեռնաշխարհում է արարել համաշխարհային պատմության նախաբանը: Առասպելներում եւ էպոսներում, հին կտակարանում իսկ Հայաստանը հիշատակվում է որպես Արարատի երկիր, ավետյաց երկիր, ուր եւ գտնվում է դրախտը»,- այս խոսքերով է սկսվում «Արարատից Եվրոպա» ֆիլմը:Ֆիլմում հեղինակները ճանապարհորդում են Ֆրանսիայով, Գերմանիայով, Իտալիայով, Բելգիայով, Վրաստանով՝ ամենուր փնտրելով քրիստոնեական մշակույթի հայկական հետքեր: Ֆիլմում ներկայացված են վաղ քրիստոնեական Հայաստանից Եվրոպա մեկնած եւ կաթոլիկ եկեղեցու սրբերի կարգը դասված հոգեւորականներ, հայկական վաղ քրիստոնեական ճարտարապետության՝ եվրոպական եկեղեցաշինության վրա ունեցած ազդեցությունը: Այստեղ հիշատակվում է նաեւ Լեոնարդո դա Վինչիի՝ Հայաստան կատարած այցը, նրա նամակները Հայաստանի մասին, որոնք հեղինակները բնորոշում են որպես «Հայկական նամակներ», ներկայացված են խաչաձեւ հիմքով կենտրոնագմբեթ եկեղեցիների ստեղծման պատմությունները:**

**Արսեն Հակոբյանը եղել է Միլանի «Ամբրոզյանա» գրադարանում, որտեղ պահպանվում է Լեոնարդո դա Վինչիի թողած ձեռագրային ժառանգության մեծ մասը: Այստեղ նա նկարահանել եւ ֆիլմում ներկայացրել է նաեւ նրա «Հայկական նամակ»-ը: Այնտեղ Դա Վինչին պատմում է Հայաստան կատարած իր այցի տպավորությունների մասին, խոսում Տավրոս լեռան, Եփրատ գետի մասին: Ձեռագրի հակառակ էջին Հայաստանի մի մասի քարտեզն է գծված:**

**- Լեոնարդո դա Վինչիի թողած ժառանգության որոշակի հատվածների վրա երեւում է հայկական ճարտարապետության հետքերը եւ ազդեցությունը, ասում է Արսեն Հակոբյանը, ավելացնելով, որ այս նամակները շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Բացի դրանից, ֆիլմում առաջին անգամ հիշատակվում է նաեւ Աբգար թագավորի սուրհանդակի ստեղծած Հիսուսի դիմանկարը, գերմանական Ուիտսբուրգ քաղաքի եպիսկոպոսական պալատում գտնվող հայոց այբուբենի որմնանկարը:**

**Ֆիլմի նկարահանման աշխատանքներին աջակցել է ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանը:**

ԳՈՀԱՐ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

# Հայ լուսանկարիչների ցուցահանդեսը Հալեպում

Վերջերս Հալեպի համալսարանում հայկական մշակույթի շաբաթվա շրջանակներում՝ Սիրիայի ազգային ուսանողական միության Հալեպի մասնաճյուղի եւ Հայ ուսանողական միության համատեղ ջանքերով բացվեց «Հալեպը եւ նրա արվարձանները հայ լուսանկարիչների աչքերով» խորագիրը կրող լուսանկարչական ցուցահանդեսը:

Ներկայացված էր Հալեպի՝ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին հին թաղամասերն ու փողոցները: Լուսանկարներում արտացոլված էին քաղաքի սոցիալական եւ առեւտրային կյանքը, պատմամշակութային տները, հուշարձաններն ու Անտիոքը Քինեսրին կապող հռոմեական ճանապարհը: Առանձնանում էին քաղաքի հին շուկաները, պատմական մզկիթներն ու ժողովրդական տարազը ներկայացնող լուսանկարներն ու գյուղական համայնապատկերը:

Հղում կատարելով «Սանա»-ին՝ Սիրիայի պաշտոնական լրատվական գործակալությանը, «Discover Syria» կայքէջը հաղորդում է, որ ցուցահանդեսի բացման արարողությանը մասնակցել են Բերիո Հայոց թեմի առաջնորդ տեր Շահան եպիսկոպոս Սարգսյանը, Հալեպի համալսարանի «Բաց կրթություն» ծրագրի պրոռեկտոր Սամիր Սաադը, Ուսուցիչների միության Հալեպի մասնաճյուղի նախագահ Ահմադ Իսան, Սիրիայի ազգային ուսանողական միության Հալեպի մասնաճյուղի նախագահ Մուստաֆա Ղարիբին:

ՄՈՎՍԵՍ ԽԵՇՈ

## ԼՈՒՐԵՐ

# Նոր ինչեղ անուն լուսանկարչական արվեստի աշխարհում




**Մեր հայրենակից Անուշ Էլբակյանի «Իմ Էյֆելը» լուսանկարը ճանաչվեց 10-րդ փուլի հաղթող Ռուսաստանի Դաշնության «Իզվեստիա» հանրահայտ օրաթերթի կողմից անցկացրած մրցույթում: Մրցույթը անցկացվում էր 10 փուլով եւ ամեն փուլ ուներ իր հաղթողը:**

**Բոլորովին վերջերս Անուշ Էլբակյանը ճանաչվեց հաղթող նաեւ Երեւանում կազմակերպված ցուցահանդեսում, որ կազմակերպել էր Elwood, NDP Group եւ Altro կազմակերպությունները: Այս անգամ ներկայացված էին Անուշի 14 լուսանկարներ: 19-ամյա Անուշը ստացել է հրավեր մասնակցելու Էդինբուրգում (Անգլիա) կայանալիք ամենամյա ցուցահանդեսին իր լավագույն 10 լուսանկարներով: Նա կմասնակցի նաեւ GPG ամերիկյան ամսագրի մրցույթում (Նյու-Յորք), որը նվիրված է լինելու Ֆրանսիացի հանրաճանաչ լուսանկարիչ Կարտիե-Բրեսոն Անրիին (Henri Cartier-Bresson): Այժմ Անուշը աշխատում է «Աշխարհը եւ Հայերը» շարքը ստեղծելու համար: Եվ ուրախալին այն է, որ շուտով Երեւանում կազմակերպվելու է Անուշ Էլբակյանի անհատական ցուցահանդեսը, որի առաջարկը նա արդեն ստացել է:**

# Հայ ջութակահարի հաղթանակը

**Կանադայում անցկացվող երիտասարդ ջութակահարների ամենամյա 14-րդ մրցույթն անցավ տարբեր ազգերի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ամերիկացիներ, ճապոնացիներ, չինացիներ, լատինամերիկացիներ եւ այլն: Նրանց մեջ էր նաեւ 11-ամյա հայ ջութակահար Հայկ Հովսեփյանը՝ Բոստոնից:**

**Մրցույթի գլխավոր եզրափակիչ փուլը տեղի ունեցավ Մոնրեալի մերձակա Salaberry de Valleyfield վայրում, Albert-Dumouchel du Ceger-ի հայտնի դահլիճում:**

**Մի զարմանալի պատահականությամբ, զուգե աստվածային կամքով եւ կամ մի այլ կերպ հենց Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, ժյուրիի միաձայն որոշմամբ Առաջին մրցանակը եւ**



**Ոսկե մեդալը շնորհվեց հայ ջութակահարին: Սա իսկապես ոչ միայն հաջողություն, այլեւ հաղթանակ է:**

# Հայկական քանոնը Աբու Դաբիում

**Մարտի 20-ից ապրիլի 7-ը Աբու Դաբիում կայացել է երաժշտական միջազգային փառատոն, որին մասնակցել է նաեւ հայազգի քանոնահարուհի Հասմիկ Լեյլոյանը: Քանոնահարուհուն նվագակցել է «Կամերտոն» կամերային անսամբլը, որի ղեկավարն է Լիանա Խանդկարյանը:**

**Հասմիկ Լեյլոյանի մենահամերգը կայացել է ապրիլի 3-ին Աբու Դաբիի «Էմիրատ» պալատում: Մենահամերգի ժամանակ հնչել են հայ, եվրոպացի դասական կոմպոզիտորների գործերը, նաեւ ջազային ու հայկական ժողովրդական ստեղծագործություններ:**

**Երեկ «Նովոստի» մամուլի կենտրոնում՝ ասուլիսի ժամանակ Լիանա Խանդկարյանը տեղեկացրեց, որ փառատոնին մասնակցելու հրավերը ստացել են «Աբու Դաբի» փառատոնի նախագահից: Փառատոնին մասնակցել են տարբեր երկրների ներկայացուցիչներ՝ Լեհաստանի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը՝ Քշիշտոֆ Պենդերեցկու ղեկավարությամբ, Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերային թատրոնը, Ամերիկայից Իլ Դիվո վոկալ քառյակը, Ճապոնիայից, Չինաստանից, Եգիպտոսից, Իտալիայից կատարողներ եւ այլն:**

**«Ինձ խնդրեցին հանդես գալ հիմնականում դասական գործերի կատարումներով, որովհետեւ դասական գործերը քանոնով ներկայացնողներն աշխարհում քիչ են», ասուլիսի ժամանակ նշեց քանոնահարուհին:**

**Փառատոնին հայազգի ներկայացուցիչներին հրավիրել էր մասնակցելու HKI միջազգային երաժշտական ֆոնդը (Լիբանան-ԱՄՆ): Հասմիկ Լեյլոյանը նախկինում մենահամերգով հանդես է եկել նաեւ Բեյրութում, որը հովանավորել էր Բեյրութում ՀՀ դեսպանը:**

**«Աբու Դաբի» փառատոնին Հայաստանի մասնակցությունը քանոնահարուհին կարեւորում է նրանով, որ հրավերն ուղարկողներն արաբներն էին, ոչ թե հայերը:**

**«Այս փառատոնի ժամանակ նվագել եմ հիմնականում դասական գործեր, որոնց մեջ մտնում էին նաեւ Արամ Խաչատրյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի եւ հայ ուրիշ հեղինակների ստեղծագործությունները: Արաբները շատ տպավորված էին հայկական երաժշտությունից, նույնիսկ տեսա՝ մի արաբ ունկնդիր հուզմունքից արտասվել էր Սայաթ Նովայի երաժշտությունը լսելիս», ասաց Հասմիկ Լեյլոյանը:**

**«Աբու Դաբի» փառատոնի կազմակերպիչներից՝ Շեյխից ու նրա կնոջից քանոնահարուհին ստացել է հատուկ շքանշան:**

**«Հասմիկ Լեյլոյանի հետ Սիրիայում ու Լիբանանում համերգներով հանդես գալու հրավերներ ենք ստացել, -ասաց Լիանա Խանդկարյանը, -արաբների համար քանոնը, իհարկե, բացահայտում չէր, որովհետեւ արաբական երկրներում քանոնը նույնպես համարվում է ժողովրդական գործիք, սակայն դասական գործերի կատարումը քանոնով արաբական երկրներում տարածված չէ»:**

**«Ազգի» հարցին՝ արդյոք Հասմիկ Լեյլոյանին առաջարկե՞լ են մեր ազգային քանոնով նվագել արաբական երաժշտություն, քանոնահարուհին պատասխանեց. «Ինձ խնդրեցին, որ «Աբու Դաբի» փառատոնի ժամանակ գոնե արաբական մի գործ նվագեմ մեր քանոնով, սակայն ես հրաժարվեցի, որովհետեւ ես գնացել էի այնտեղ ներկայացնելու առաջին հերթին հայկական երաժշտությունը, իսկ առհասարակ արաբական երաժշտությունը նվագելու մեջ ես սխալ բան չեմ տեսնում, քանի որ դա ստեղծագործություն է, որը պարզապես հարգանքի համար էլ կարելի է նվագել»:**

**Հասմիկ Լեյլոյանը մտադիր է կազմակերպել քանոնի միջազգային փառատոն, այդ ծրագիրն արդեն երկու տարի է ընթացքի մեջ է, քանոնահարուհին նախատեսում է, որ փառատոնին մասնակցեն տարբեր երկրների ներկայացուցիչներ՝ ամեն մեկն իր երկրում ազգային գործիք համարվող քանոնով, նաեւ լինելու է կոնֆերանս, որտեղ ամեն մի երկիր տեսականորեն կներկայացնի, թե ինչո՞վ եւ ինչքանո՞վ է քանոնը տվյալ երկրի ազգային գործիքը:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 04/05/2010 22:22 Page 1



# Արոնյանը պահպանել է տեղը լավագույն հնգյակում

## Լիլիթ Գալոյանի վարկանիշը լավագույնն է կարիերայում

ՖԻԴԵ-ի դասակարգման նոր ցուցակում Լեւոն Արոնյանը 2783 վարկանիշով պահպանել է տեղը 5-րդ հորիզոնականում: Նախորդ ցուցակի համեմատ նա իր վարկանիշն ավելացրել է մեկով: Նրա ներկայիս ցուցանիշն ընդամենը 3-ով է զիջում իր ռեկորդային վարկանիշին (2786), որ գրանցվել էր անցյալ տարվա նոյեմբերին:



Դասակարգման ցուցակի առաջատարի դիրքը պահպանել է նորվեգացի Մագնուս Կառլսենը (2813): Նրան ընդամենը մեկ միավոր է զիջում բուլղարացի Վեսելին Թոփալովը, որն իր վարկանիշն ավելացրել է 7-ով: 3-րդ տեղում ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկն է (2790), որին հաջորդում է աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդը (2789): Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Շահրիյար Մամեդյարովը (2763), Ալեքսանդր Գրիշչուկը (2760), Յու Վանգը (2752), Պավել Էլյանովը (2751) եւ Ալեքսեյ Շիրովը (2742):

100 ուժեղագույն շախմատիստների թվում են եւս 3 հայ շախմատիստներ: 25-րդ տեղում է Սլովակիայում բնակվող Սերգեյ Մովսիսյանը, որը վարկանիշն ավելացրել է 8-ով (2717) եւ 4 հորիզոնականով առաջադիմել է: Վլադիմիր Հակոբյանը պահպանել է իր դիրքը 43-րդ տեղում, իսկ վարկանիշը (2694) ավելացրել է 6-ով: Գաբրիել Սարգսյանը նահանջել է 2 տեղով (55-րդ հորիզոնական), իսկ ահա վարկանիշն ավելացրել է 2-ով (2677):

Կանանց դասակարգման ցուցակի առաջատար Յուդիթ Պոլգարը պահպանել է իր դիրքը: Նա իր վարկանիշով (2682) 60 միավորով գերազանցում է 2-րդ տեղում ընթացող հնդիկ շախմատիստուհի Համփի Կոներուին: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Հոու Յիֆանը (2589), Անտոանետա Ստեֆանովան (2560), Նադեժդա Կոսինցեւան (2553), Պիա Կրամլինգը (2536), Տատյանա Կոսինցեւան (2534), Աննա Մուզիչուկը (2529), Կատերինա Լահնոն (2527) եւ Մարի Սեբագը (2524):

100 լավագույն շախմատիստուհիների ցանկում Հայաստանը ներկայացնում են Լիլիթ Մկրտչյանը, Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Գալոյանը: Մկրտչյանը մարտի համեմատ իր վարկանիշը (2477) նվազեցրել է 26-ով եւ 13-րդ տեղից նահանջել է 26-րդ հորիզոնական: Իր ցուցանիշը վատթարացրել է նաեւ Էլինա Դանիելյանը (2473): Նա վարկանիշն իջեցրել է 18-ով եւ 18-րդ տեղից նահանջել է 29-րդ հորիզոնական: Իսկ ահա Լիլիթ Գալոյանը շախմատային իր կարիերայում ամենաբարձր վարկանիշին է հասել: Գալոյանին առաջին անգամ հաջողվեց հատել 2400-ի սահմանագիծը: Լիլիթը 2402 վարկանիշով 66-րդ տեղում է: Մարտի դասակարգման ցուցակում նա 2380 վարկանիշով 88-րդ հորիզոնականում էր:

Հայաստանը ՖԻԴԵ-ի անդամ 139 երկրների թվում 2631 վարկանիշով եզրափակում է լավագույն տասնյակը: Շախմատային գերհզոր տերությունների ցանկը նախկինի պես գլխավորում է Ռուսաստանը (2731): Լավագույն տասնյակում ընդգրկված են նաեւ Ուկրաինան (2688), Չինաստանը (2648), Հնդկաստանը (2643), Իսրայելը (2640), Ֆրանսիան (2638), Ադրբեջանը (2638), Հունգարիան (2637) եւ ԱՄՆ-ը (2635):

# Վախճանվել է Ֆլորենսիո Կամպոմանեսը

**83 տարեկանում Ֆիլիպիններում վախճանվել է ՖԻԴԵ-ի նախկին նախագահ Ֆլորենսիո Կամպոմանեսը: Նա պատանեկան տարիներին հրապուրվեց շախմատով, ինչի արդյունքում 2 անգամ (1956, 1960-ին) հռչակվեց Ֆիլիպինների չեմպիոն: Նա մասնակցել է շախմատի համաշխարհային 5 օլիմպիադաների: Ավարտելով ակտիվ շախմատիստի կարիերան, Կամպոմանեսը 1966-ից աշխատանքի է անցել ՖԻԴԵ-ում, 1974-ին դարձել է կազմակերպության փոխնախագահ:**



**Հենց Կամպոմանեսն էր փորձում շախմատ վերադարձնել կամակոր ու սկանդալային բնավորությամբ հայտնի Բոբի Ֆիշերին՝ ցանկանալով մրցամարտ կազմակերպել այն ժամանակվա աշխարհի չեմպիոն Անատոլի Կարպովի հետ: Սակայն այդ մտահղացումը տապալվեց:**

**1982-ին Ֆլորենսիո Կամպոմանեսը գլխավորեց ՖԻԴԵ-ն: Նա պատմության մեջ մտավ որպես մի նախագահ, որը 1985-ին դադարեցրեց աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար ընթացող Կարպով-Կասպարով շախմատային մրցախաղը: Մրցակարգի համաձայն հաղթող էր ճանաչվելու 6 հաղթանակ տոնած շախմատիստը: Կարպովն այդ պահին հաղթում էր 5-3 հաշվով: Մրցախաղը սկսվել էր 1984-ի սեպտեմբերին եւ դադարեցվեց հաջորդ տարվա փետրվարին: Հետաքրքրական է, որ այդ որոշումից երկու մասնակիցներն էլ դժգոհ էին:**

**1995-ին Կամպոմանեսը հեռացավ ՖԻԴԵ-ի նախագահի պաշտոնից: Նրան փոխարինեց Կիրսան Իլյումժինովը: Իսկ հայրենիքում Կամպոմանեսին չարաշահումների համար ազատազրկման դատապարտեցին, որը փոխարինվեց դրամական խոշոր տուգանքով:**

**Վերջին տարիներին Կամպոմանեսը բնակվում էր Ֆիլիպիններում: 2007-ին նա ավտովթարի ենթարկվեց ու ծանր վնասվածքներ ստացավ: Նա նաեւ հիվանդ էր թաղցկեղով: Նա մահացավ Բագիոյում, որտեղ 1978-ին կայացել է աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար Անատոլի Կարպովի եւ Վիկտոր Կորչնոյի մրցավեճը: Կամպոմանեսն այդ մրցախաղի կազմակերպիչն էր:**

**«Շնորհակալ եմ Կամպոմանեսին այն ամենի համար, ինչ արել է շախմատում: Ցավակցում եմ նրա ընտանիքին», հայտարարել է ՖԻԴԵ-ի ներկայիս նախագահ Կիրսան Իլյումժինովը:**

**«Շնորհիվ Կամպոմանեսի շախմատը զարգացում է ապրել Ասիայում եւ Աֆրիկայում, ինչի համար շնորհակալ եմ նրանից: Նա Բոբի Ֆիշերի բարեկամն էր եւ ՖԻԴԵ-ի նշանավոր նախագահը», նշել է Անատոլի Կարպովը:**

# Փոփոխություններ խաղացանկում

**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության խաղացանկում տեղի են ունեցել փոփոխություններ: Հաշվի առնելով, որ մայիսի 25-ին Հայաստանի ազգային հավաքականը Երեւանում հյուրընկալելու է Ուզբեկստանի ընտրանուն, իսկ մայիսի 7-ին եւ 9-ին ՀՀ մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը մրցելու է Իրանի իր հասակակիցների հետ, «Կիլիկիա»-«Փյունիկ» եւ «Բանանց»-«Շիրակ» հանդիպումները կկայանան այսօր: Առաջին խաղը կկայանա «Հրազդանում», ժամը 17-ին, իսկ «Բանանցի» եւ «Շիրակի» մրցավեճը «Հանրապետական» մարզադաշտում կսկսվի ժամը 20-ին:**

# Երրորդ անընդմեջ ոչ-ոքին

**Սոֆիայում սկսվեց Անանդ-Թոփալով շախմատային մրցախաղի 2-րդ շրջանը: 7-րդ պարտիայում կրկին սպիտակներով խաղում էր Անանդը: Նա բավական հաջող էր անցկացրել սպիտակներով նախորդ 3 պարտիաները՝ վաստակելով 2,5 միավոր: Այդ պարտիաներում աշխարհի չեմպիոնն ընտրել էր կատալոնական սկզբնախաղ: Սոֆիայում նույնիսկ կատակում են, որ Թոփալովին շատ կարգով պետք է օգնության ձեռք մեկնի «Ինտերի» մարզիչ Ժոզե Մոուրինյուն, որը կատալոնացիների դեմ հաջող խաղալու փորձ ունի:**

**Երկարատեւ պայքարից հետո, 58-րդ քայլում դիրքը 3 անգամ կրկնվելու արդյունքում գրանցվեց ոչ-ոքի: 7 տուրից հետո Անանդը հաղթում է 4-3 հաշվով:**

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Դարչինյանը կմենամարտի Ռիչարդ Գարսիայի հետ

Առաջին թեթեւագույն քաշային կարգում WBC-ի եւ WBA-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վախթանգ Դարչինյանն իր հերթական մենամարտը կանցկացնի մայիսի 20-ին ավստրալական Սիդնեյ քաղաքում: Նրա մրցակիցը կլինի ֆիլիպինցի Ռիչարդ Գարսիան, որն իր կարիերայի մեծ մասն անցկացրել է մինչեւ 49 կգ քաշային կարգում:

Գարսիան 25 տարեկան է, պրոֆեսիոնալ ռինգում անցկացրել է 32 մենամարտ: Ֆիլիպինցի բռնցքամարտիկը տոնել է 21 հաղթանակ, 1-ն ավարտել է ոչ-ոքի, 10 մենամարտում պարտվել է:

ԼՈՂ

# Հաջող մրցելույթներ Թբիլիսիում

**Հայաստանի հավաքականի կազմում 13 լողորդներ մասնակցեցին լողի Թբիլիսիի բաց առաջնությանը: Հաղթողները որոշվում էին յուրաքանչյուր մրցաձեւից 50, 100 եւ 200 մ լողահերթերի ընդհանուր արդյունքներով:**

**Հայ լողորդները բավական հաջող ելույթներ ունեցան՝ արժանանալով մրցանակների: Աղջիկներից թիկնալողում գերազանց ելույթ ունեցավ 15-ամյա Անահիտ Բարսեղյանը: Նա 100 մ թիկնալողում Հայաստանի մեծահասակների նոր ռեկորդ սահմանեց՝ մրցատարածությունը հաղթահարելով 1.09.22 րոպեում: Անահիտը լավագույնն էր նաեւ 50 մ (32.20 վրկ) եւ 200 մ (2.31.84 րոպե) լողահերթերում: Այս մրցաձեւում հայ լողորդուհին լավագույնը ճանաչվեց եւ պարգեւատրվեց հատուկ գավաթով:**

**Նույնոճիսի մրցանակով պարգեւատրվեց նաեւ Միքայել Քոլոյանն ազատ լողաոճում: Նա ճանաչվեց մրցաշարի լավագույն լողորդ: Քոլոյանը 50 մ մրցատարածությունն անցավ 23.97 վրկ-ում, 100 մետրը՝ 53.06 վրկ-ում, 200 մետրը՝ 1.56.20 րոպեում:**

**Բրաս լողաոճում լավագույնն Անդրանիկ Հարությունյանն էր, իսկ ազատ լողաոճում առաջին տեղը զբաղեցրեց Մոնիկա Վասիլյանը: Տղամարդկանց 4x50 մ ազատ ոճի փոխանցումալողում էլ հայ լողորդները գերազանցեցին մրցակիցներին՝ միաժամանակ սահմանելով Հայաստանի ռեկորդ: Մեր մյուս լողորդները եւս վստահ ելույթներ ունեցան՝ ցույց տալով իրենց լավագույն արդյունքները:**

**Լողի Հայաստանի հավաքականը Թբիլիսիում ելույթ ունեցավ մարզիչներ Միսակ Գաբրիելյանի եւ Արման Վահանյանի գլխավորությամբ: Առաջիկայում հայ լողորդներին պատասխանատու մրցումներ են սպասում: Հուլիսին Հելսինկիում կայանալու է Եվրոպայի առաջնությունը, որում Հայաստանը ներկայացնելու է մեկ լողորդ: Նոյեմբերին Մոսկվայում կայանալիք աշխարհի գավաթի խաղարկությունում հանդես կգան 2-3 հայ լողորդներ: Մեր երկրից 2 լողորդ կմասնակցի դեկտեմբերի 12-17-ը Դուբայում կայանալիք աշխարհի առաջնությանը:**

# Իրավիճակը բարելավել չի հաջողվում

**Նալչիկում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի մրցաշարի 7-րդ տուրում Էլինա Դանիելյանը կրկին պարտվեց՝ զիջելով Ժաո Քսյուին: Լիլիթ Մկրտչյանը ոչ-ոքի խաղաց Նանա Ձագնիձեի հետ: Դանիելյանը մեկ միավորով եզրափակում է աղյուսակը, իսկ Լիլիթը 3 միավորով Բաիրա Կովանովայի եւ Բաթյուհագ Մոնգոնտուլի հետ բաժանում է 7-9-րդ տեղերը:**

**Մրցաշարի միանձնյա առաջատար Տատյանա Կոսինցեւան ոչ-ոքի խաղաց Համփի Կոներուի հետ ու վաստակեց 6 միավոր: Երկրորդ տեղում 5 միավոր ունեցող Հոու Յիֆանն է, որը հաղթեց Մոնգոնտուլին: 4,5-ական միավոր են վաստակել Պիա Կրամլինգն ու Ժու Չենը: Կրամլինգը հաղթեց Կովանովային, Ժու Չենն առավելության հասավ Յիլդիզի նկատմամբ:**

# ՊՍԺ-ն Ֆրանսիայի գավաթակիր

**Փարիզի ՊՍԺ-ն դարձավ Ֆրանսիայի ֆուտբոլի գավաթակիր՝ եզրափակիչում 1-0 հաշվով հաղթելով «Մոնակոյին»: Հանդիպման ելքը վճռեց 105-րդ րոպեին Օրոյի խփած միակ գոլը: Վերջին անգամ ՊՍԺ-ն Ֆրանսիայի գավաթակիր էր դարձել 2006-ին, իսկ «Մոնակոն» մրցանակը նվաճել էր 1991-ին:**

# Նադալը կրկնեց Աղասու արդյունքը



**23-ամյա Ռաֆայել Նադալը վերջին 6 տարիներին 5-րդ անգամ դարձավ Հռոմում անցկացված Masters կարգի թենիսի մրցաշարի հաղթող: Նա եզրափակիչում 7-5, 6-2 հաշվով պարտության մատնեց իր հայրենակից Դավիթ Ֆեռերին:**

**Եզրափակիչի ճանապարհին Նադալը միայն մեկ մրցախաղում որոշակի դժվարությունների հանդիպեց: Դա լատվիացի Էռնեստ Գուլբիսի հետ մրցախաղն էր: Վերջինս պայքարից դուրս էր մղել Ռոջեր Ֆեդերերին: 3 խաղափուլ պահանջվեց Գուլբիսին հաղթելու համար:**

**Ռաֆայել Նադալը Masters կարգի մրցաշարերում 17-րդ հաղթանակը տոնեց եւ այդ ցուցանիշով հավասարվեց լեգենդար Անդրե Աղասուն, առաջ անցավ իր հիմնական մրցակից Ռոջեր Ֆեդերերից, որի հաշվին նման 16 հաղթանակ էր գրանցված: «Մեծ սաղավարտի» մրցաշարերում Նադալն առայժմ 6 անգամ է դափնեկիր դարձել:**

# «Միլանը» հետաքրքրված է բրազիլացի դարպասապահով

**Իտալական «Ալմերիա» թիմի դարպասապահ Դիեգու Ալվեսը հավանաբար հաջորդ մրցաշրջանն անցկացնի Իտալիայի A սերիայում: Բրազիլացի դարպասապահին ցանկանում է իր կազմում ընդգրկել «Միլանը»: Երկու ակումբներն արդեն սկսել են բանակցությունները: Իտալական ակումբը սկզբնական շրջանում 15 մլն եվրո էր պահանջում, սակայն դարպասապահի տրանսֆերը «Միլանին» կարող է 10 մլն եվրո արժենալ: Նշենք, որ «Ալմերիան» Դիեգու Ալվեսին 2007-ի ամռանը գնել էր 2,2 մլն եվրոյով: «Ալմերիայում» հանդես գալիս բրազիլացի դարպասապահն աչքի է ընկել 11 մ հարվածների հետ մղմամբ:**

**Իտալական ակումբը բանակցում է նաեւ իտալական «Ջենոայի» հետ պաշտպան Չիկոյի վաճառքի հարցով: Սակայն կողմերն առայժմ համաձայնության չեն գալիս ֆուտբոլիստի տրանսֆերային գնի շուրջը: «Ալմերիան» 6 մլն եվրո է պահանջում, ինչը 2 անգամ գերազանցում է այն գումարը, որը պատրաստ է վճարել «Ջենոան»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «Չունեւոր գյուղացուն նվեր ստացողից դարձնում ենք նվիրատու»

## *Ասում է «Հեյֆեր ինթերնեշնլի» հայկական մասնաճյուղի տնօրենը*

***2009-ին լրացավ Հայաստանում գյուղացիներին անմիջական օգնություն տրամադրող «Հեյֆեր ինթերնեշնլի» գործունեության 10 տարին՝ այդ միջազգային կազմակերպության ստեղծման 65-րդ տարեդարձի հետ միաժամանակ: Այդ առթիվ հանդիպեցինք եւ մեր երկրում կազմակերպության իրականացրած ծրագրերի մասին զրուցեցինք «Հեյֆեր փրոջեկտ ինթերնեշնլի» հայկական մասնաճյուղի տնօրեն Անահիտ Ղազանչյանի հետ:***



Մեր զրուցակիցը նախ պատմեց, թե ինչպես է ստեղծվել այս կազմակերպությունը, ով է ստեղծել եւ ինչու է կոչվում «հեյֆեր»:

Ամերիկացի ֆերմեր Դան Ուեստը Իսպանիայի քաղաքացիական պատերազմի ժամանակ սոված երեխաների համար կաթի չափաբաժիններ էր լցնում, երբ մտածեց. «Այս երեխաներին ոչ թե մի բաժակ կաթ, այլ կով է անհրաժեշտ»: Ուեստը Բրեթրենի եկեղեցու բարեգործական ծրագրի աշխատող էր եւ որոշում էր, թե ով պետք է եւ ով չպետք է ստանա չափաբաժիններ, ինչը բառացիորեն նշանակում էր, թե ով պիտի ապրի եւ ով մեռնի: Նա հասկացավ, որ այսպիսի օգնությունը երբեք բավարար չի լինելու:

Ուստի Ուեստը, վերադառնալով տուն, հիմնեց «Հեյֆեր» կազմակերպությունը, կազմակերպություն, որն իրեն նվիրեց սովի դեմ պայքարի գաղափարին: 1944-ին տեղի ունեցավ առաջին 17 երինջների տեղափոխումը Յորքից (Փենսիլվանիայի նահանգ) Պուերտո Ռիկո, որոնք բաժանվեցին այն ընտանիքներին, որոնք թերսնվող երեխաներ ունեին, երեխաներ, ովքեր երբեք չէին համտեսել կովի կաթը:

Հիմա արդեն ավելի քան 125 երկրներում 9,2 մլն ընտանիքներ օգտվել են Հեյֆերի օժանդակությունից եւ դարձել ինքնաբավ: Նրանք կազմակերպությունից ստացել են «հեյֆեր»՝ երինջ, որն այդ տարին պետք է ծնի, ապա պահել-մեծացրել են ծնված հորթին մինչ երինջ դառնալը եւ արդեն իրենք են նվիրաբերել մեկ այլ ընտանիքի:

Հայաստանում «Հեյֆերը» սկսել է գործել 1999-ից: Ըստ Անահիտ Ղազանչյանի, Հարավային Կովկասում իրագործված ծրագրերի մեծ մասը իրականացվել է Հայաստանում: «Միայն Հայաստանում աջակցել ենք Հայաստանի տարբեր մարզերի 165 գյուղերում ապրող ավելի քան 4 հազար ընտանիքների: Շահառուները որպես աջակցություն ստացել են տարբեր ընտանի կենդանիներ՝ կովեր, այծեր, ոչխարներ, մեղուներ, ճագարներ, հավեր, ձկներ, հնդկահավեր, գոմեշներ, ցլիկներ, կալիֆոռնիական որդեր, ինչպես նաեւ կարտոֆիլի, ցորենի սերմեր, մրգատու եւ այլ ծառերի տնկիներ: Այդ ընտանիքների կեսից ավելին արդեն իրենք են կատարել նվիրատվության փոխանցումներ: Այժմ մենք Հայաստանում իրականացնում ենք 17 ծրագրեր», փաստեց «Հեյֆեր ինթերնեշնլի» հայկական մասնաճյուղի տնօրենը:

«Հեյֆերը» հիմնականում երինջներ է տրամադրում գյուղացիներին: Նվիրատվություն ստանալուց երեք տարի հետո (այս ժամանակահատվածը անհրաժեշտ է որպեսզի հորթը երինջ դառնա), շահառուները, կատարելով նվիրատվության փոխանցում, իրենք են դառնում են դոնոր, եւ պետք է ասեմ, որ ուրիշին օգնության ձեռք մեկնելիս նրանք ավելի շատ են ուրախանում, քան երբ ստանում են կենդանին որպես նվիրատվություն», ասաց Անահիտ Ղազանչյանը: Նրա հավաստիացմամբ, անգամ այն տարիներին, երբ երաշտ է եղել եւ գյուղացիներից շատերը չեն կարողացել վարկերը վերադարձնել վարկատու կազմակերպություններին, «Հեյֆերի» ծրագրերի մասնակիցներն ամբողջությամբ կատարել են իրենց պարտավորությունը եւ վերադարձրել իրենց ստացածի դիմաց:

Կազմակերպության հայկական մասնաճյուղի տնօրենն ընդգծեց, որ գյուղական համայնքներում ծրագրեր իրականացնող այլ կազմակերպություններից իրենցը տարբերվում է նրանով, որ մյուսներն աշխատում են գյուղացիության այն հատվածի հետ, որին սկզբնական շրջանում աջակցում է «Հեյֆերը»: «Այն հատվածի հետ, որ մենք ենք աշխատում, ոչ ոք չի աշխատում: Այսինքն, չունեւոր գյուղացուն օգնելով, դարձնելով նրան ապահով, հնարավորություն ենք ստեղծում, որ մյուս կազմակերպությունները սկսեն ֆինանսավորել նրան արդեն որպես հուսալի եւ կայացած գործընկերոջ: Փաստորեն մեր ծրագրերի շնորհիվ գյուղացին չի լքում գյուղը, եւ այսպիսով կանխվում է արտագաղթը», ասաց մեր զրուցակիցը:

«Ինչպե՞ս է ֆինանսավորվում կազմակերպությունը» մեր հարցին պատասխանելով՝ Անահիտ Ղազանչյանն ասաց, որ կազմակերպությունն իր միջոցները ստանում է մասնավոր նվիրատուներից, որոնք, ըստ իրենց ցանկության եւ հնարավորության, գումարներ են նվիրաբերում՝ նպատակ ունենալով աջակցել սովին եւ աղքատության վերջ տալու կազմակերպության հռչակած առաքելությանը: Իսկ կոնկրետ Հայաստանում այս տարիների ընթացքում գյուղացիներին աջակցելու նպատակով իրականացված ծրագրերի գումարային արժեքը կազմել է ընդհանուր առմամբ 4 մլն 145 հազար դոլար:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

***Խմբ. կողմից***-Հիշեցնենք, որ նման ծրագրով եւ գրեթե համանման պայմաններով Արցախում ծրագրեր են իրականացնում Փարիզից մեր թերթի բարեկամ, ռամկավար հայտնի գործիչ Լեւոն Քեբաբջյանը՝ տիկնոջ հետ:

**Հրաչյա Ղափլանյանի անվան Երեւանի դրամատիկական թատրոն**

**Մայիսի 8-ին, 22-ին եւ 30-ին**
**Նոր ներկայացում**

**Վիլյամ Շեքսպիր «Հուլիոս Կեսար»**

**(Ողբերգություն 2 գործողությամբ)**

Թարգմանությունը՝ Խաչիկ Դաշտենցի
Բեմադրության հեղինակ՝ **Արմեն Խանդիկյան**
Նկարչական ձեւավորումը եւ զգեստները՝ **Կարեն Գրիգորյանի**
Գլխավոր դերերում՝ Վլադիմիր Մսրյան, Արթուր Ութմազյան, Հրաչյա Հարությունյան, Գրիգոր Գաբրիելյան, Գրիգոր Խաչատրյան, Արմեն Բարսեղյան, Վահագն Գալստյան

Թատրոնի գեղարվեստական ղեկավար
ՀՀ ժողովրդական արտիստ
**Արմեն Խանդիկյան**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

*Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի տեղեկատվության եւ ծրագրային ապահովման բաժնի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման բաց մրցույթի*

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

համակարգիչների եւ համակարգչային ցանցերի ղեկավարում:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

ա) բարձրագույն մասնագիտական կրթություն, բ) դատախազական (պետական) ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն 2 տարվա ստաժ կամ առնվազն 3 տարվա դատախազական ծառայության ստաժ, կամ գիտական աստիճան կամ 4 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին 3 տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն 1 տարվա աշխատանքային ստաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր ստասարկման բնագավառի մասին, համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, գրական հայերենի պատշաճ իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «17» մայիսի 2010թ. :

Մրցույթն անցկացվելու է 2010թ. հունիսի 3-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/:

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :

*«05 ». 05. 2010թ.*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

*Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Տավուշի մարզի դատախազության տարածքային բաժնի առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի*

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

իրավական ակտերի ու այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքների իրականացումը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, դատախազությունում ստացվող փաստաթղթերի գրանցման եւ հասցեատերերին հանձնման ապահովումը, փաստաթղթային ստասարկումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, դատախազությունից առաքվող փաստաթղթերի եւ գործերի գրանցման ու առաքման ապահովումը, տեղեկանքներ, զեկուցագրեր եւ այլ գրություններ նախապատրաստելը, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքների իրականացումը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

ա) միջին մասնագիտական կրթություն, բ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր ստասարկման բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, ե) գրական հայերենի պատշաճ իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «17» մայիսի 2010թ. :

Մրցույթն անցկացվելու է 2010թ. հունիսի 3-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/:

*5 ». 05. 2010թ.*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

### Մրցույթի հրավեր 102/10-PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ «Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում» ծրագրին ծառայություններ մատուցելու համար:

Մրցույթի հրավերին մանրամասն կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73 (ներքին) 126, ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. մայիսի 25-ը, ժամը 17:00-ն:

### Մրցույթի հրավեր 103/10-PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ պետական 12 քոլեջներին համակարգչային սարքավորումներ մատակարարելու համար:

Մրցույթի հրավերին մանրամասն կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73 (ներքին) 126, ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. մայիսի 24-ը, ժամը 17:00-ն:

### Մրցույթի հրավեր 104/10/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Փամբակ համայնքին կովեր մատակարարելու եւ փոխադրելու համար:

Մրցույթի հրավերին մանրամասն կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. մայիսի 18-ը, ժամը 17:00-ն:

## Գրանցվել է բանկի նոր մասնաճյուղ

Կենտրոնական բանկի նախագահի ապրիլի 29-ի թիվ 1/364 Ա որոշման համաձայն գրանցվել է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի «Գյումրի» մասնաճյուղը:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Պատվիրատուն՝ «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, հասցեն՝ ք. Երեւան, Հովսեփյան 95, հայտարարում է «ՄԲԱ–ՀՀՌՑ 05/01/10» ծածկագրով մրցակցային բանակցություններ:

Գնման առարկան է հանդիսանում Պատվիրատուի հեռուստառադիոհեռարձակման ցանցում գործող 100, 1 000 եւ 5 000 Վտ հզորությամբ հաղորդակների համար գեներատորային լամպերի ձեռքբերումը:

Հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել՝ գեներատորային լամպերի ձեռքբերման գնման պայմանագիր:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը՝ ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2010թ. հունիսի 1-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, գնումներին մասնակցելու իրավասու բոլոր անձինք կարող են մասնակցել մրցակցային բանակցություններին:

Հրավեր ստանալու համար պահանջվում է 1 000 ՀՀ դրամ գումարի վճար՝ ԱՇԻԲ, Աղասյան մ/ճ 247460117994 հաշվեհամարին:

Հայտերը անհրաժեշտ է ներկայացնել հայերեն լեզվով, վերոհիշյալ հասցեով, մինչեւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ը:

*«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ*

Ռիելթոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<Ադամանդ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Բնակելի տուն: Ընդ. մակերեսը 125.7 քմ, հողամասը 1240 քմ, լողարան 12.6 քմ, մառան 33.6 քմ: Հասցե՝ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Սայաթ Նովա փող.: Մեկնարկային գինը՝ 4600000 դրամ:

- Բնակելի տուն: Ընդ. մակերեսը 91.2 քմ, հողամասը 800 քմ:Հասցե՝ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Առափնյա փող., տուն 63: Մեկնարկային գինը՝ 4000000 դրամ:

- Բնակարան: Ընդ.մակերեսը 42.05 քմ,: Հասցե: ք. ք. Եր ան, Զ. Սարկավագի 129/3-1: Մեկնարկային գինը՝ 13500000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետ հոլանդական եղանակներով՝ ք.Եր ան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 07.06.2010թ-ից մինչ 30.08.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**

«Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում՝ ք. Երեւան, Ագաթանգեղոս 6/1, 30.04.2010թ. իրականացվելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին պատկանող գույքի աճուրդային վաճառքը «դասական», այնուհետեւ «հոլանդական» եղանակներով՝

Մարդատար ավտոմեքենա՝ ՏՈՅՈՏԱ LC PRADO-2.7 GAS, արտադ. տարեթիվ 2008թ.: Մեկնարկային գինը 14416000 դրամ:

Լրացուցիչ տեղեկությունների, համար այցելել www.akson.am կամ զանգահարել՝ (010) 56-45-13:

**www. azg.am**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 4.05.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: